

- 285 -

ԳՐ. ՖԱԼԵԹԵՎ

ՖԻԶԻԿԱՅԻ  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՅՈԹՆԱՄՑԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

V ՏԱՐԻ

Ա.Ո.Ց.ՁԻՆ ՍԵՄՆԵՑՏՐ

---

ՊԵՏՐՈՍ

1932

ՅԵՐԵՎԱՆ

-285-

-285-

31 JAN 2018

ԳՐ. ԹԱԼԵՑԵՎ


ՖԻԶԻԿԱՅԻ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՒՔ

ԳՈՐԾԱՐԱԿԱՅԻՆ ՑՈԹՆԱՄՑԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

V SURH

ԱԹԱԶԻՆ ՍԵՄԵՍՏՐ

Թարգմ. ՌՈՒԲԵՆ ԲԱԲԱՆՅԱՆ



ՊԵՏՐԱՎԱՏ

1932

ՅԵՐԵՎԱՆ

## ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՐՄԱՑԻՆ  
ՑԵՐԵՎՈՒՅՑԹՆԵՐԻ ՑԵՎ ՆՐԱՆՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ԿԻՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարվա յեղանակների փոփոխությունը և մարդու կախումը յեղանակից առ իպեցին մարդուն վեռ ամենահին ժամանակներում ազաստաբան վորոնել ցրտից և վատ յեղանակներից:

Թափառական (վաչկատուն) ժողովուրդները, վորոնք վորս կամ անտառաններին կեր գտնելու համար ստիպված են հաճախակի փոխել իրենց բնակության տեղը, իրենց համար շինում են ժամանակավոր շարժական կացարաններ (նկ. 1). Նստակյաց ժողովուրդները, վորոնք յերկրագնդի բնակչության մեծամասնությունն են կազմում, շինում են մշտական շենքեր, թե բնակության և թե աշխատանքի համար:



Նկ. 1. Վաչկատանների կացարան:

Ժամանակակից կուլտուրական մարդն արդեն չի սահմանափակվում միայն նրանով, վոր իրեն պաշտպանի անձրեկց, քամուց և ցրտից, այլ ձգտում է իր շենքերում ստեղծել միանգամայն առողջապահական պարագաներ և հարմարություններ թե բնակության և թե աշխատանքի համար: Նոր շենք կառուցելիս աշխատում են թե նպատակահարմար ձեռվ գործածել նորթը, վորից շենքը կառուցվում է, և թե նոր շինության

Պատրասխ տպարան  
Դաշտի 7164 (Բ)  
Հրամ. № 2124  
Պատվիր № 824  
Տիր. 17000




Խ-38693 գր

Մրգագրեց Սոռ Հակոբյան

Հաճանչված և արտադրված 10/III 1932 Ա. Տ. Ա

Առաջարկված և տպագրելու 9-ին ապրիլի 1932 թ.

պլանն այնպես կազմել, վոր նա լիովին բավարարի այն պահանջները՝ վորոնց նա ծառայելու յև Գործարանի շենքը (նկ. 3) շինված և դըպ-րոցի շենքից (նկ. 2) բոլորովին տարբեր ձևով: Չի կարելի առանց փոփոխությունների և հարմարեցումների գպրոցական շենքը վորպես գործարան ծառայեցնել ճիշտ այնպես, ինչպես չի կարելի գործարանն առանց փոփոխությունների գպրոց դարձնել: Այն տարբեր նպատակները, վորոնց ծառայելու յեն այդ շենքերը, պայմանավորում են նրանց կառուցվածքի տարբերությունները: Մի կամ միքանի ընտանիքների




նկ. 2. Մասնավոր մատուցում բանակարանային շենքաւորությունը: Քորոց մառակավուն խճուղու վրա:

համար փոքրիկ տներն այլ կերպ են կառուցված, իսկ բանվորական կոռպակերատիվների վիթխարի տները, վորտեղ հենց միայն շինության վիթխարիությունը թույլ և տալիս այնպիսի հարմարություններ առեղծել, վորոնց մասին մտածել անդամ չի կարելի փոքրիկ տնակի կառուցվելիս, կառուցվում են այլ կերպ: Տնտեսության ոժանդակ շենքերը՝ որինակ՝ բանջարեղենների նկուղները, սառցահնները, անտառաների դոմերը նման չեն իրար, վորովնեակ նրանց տարբեր նպատակները՝ տարբեր պայմաններ են պահանջում: Անտառների գոմը պետք ե լինի տաք և լուսավոր, իսկ բանջարեղենների նկուղը, ընդհակառակը՝ լուսավոր չպետք ե լինի և նրա բարեխառնությունը պետք ե այնքան լինի, վոր բանջարեղենները լերկար ժամանակ կարողանան դիմանալ:

առանց սառչելու և ծրելու: Վերջապես շինության համար այս կամ այն նյութն ոգտագործելու հնարավորությունը տարբեր բնույթ և տալիք շենքին: Կարելի յե կառուցել վիթխարի շենք յերկաթ-բետոնից, բայց այդ մեծության տուն փայտից կամ նույնիսկ աղցուսից կառուցել չե կարելի:

Դասընթացքի հետագա գլուխներում մենք աշխատելու յենք տաք այն հիմնական որենքները, վորոնցով պետք ե զեկավարվել շենքեր շինելիս և այդ շենքերը ջեսուցումով, ողափոխումով, ջրմուղով ու կա-



նկ. 3. Բառագի գյուղատնտեսական մեքենաների գործարանը, հնդամյակի զիգանտներից մեկը:

ուղղով ապահովելիս: Այդ որենքները ձեզ համար կպարզին ուրիշ շատ յերեսույթներ են, վորոնց մենք առիթ ենք ունենում հանդիպելու ամեն օր:

Քանի վոր շենքերի կառուցման հիմնական նպատակն ե ցրտից պաշտպանվելը, առաջին հերթին ծանոթանանք ջերմակին յերեսույթների հետ:

### ՄՈՐՄԻՆԵՐԻ ԶԵՐՄԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ՎՈՐՈՇԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Հավանաբար դուք առիթ եք ունեցել սառնամանիքից ներս մանելու թույլ կերպով տաքացված սենյակը և նկատել եք, վոր այդ սենյակն սկզբում ձեզ տաք և թվում: Վորոշ ժամանակ այնահեղ նսաեւուց հետո գուք զգացել եք, վոր սենյակն ամեներն ել տաք չե, այլ ցուրտ եւ Զգալության այդ պատրանքը հատկապես նկատելի յե հեռակալ փոքրիկ ժամանակ, վորը հանձնարարվում ե ձեզ կատարել:

**Փորձ.** — Վերցրեք լերկու գտվաթթ և մի խոր աման Գավաթներից մեջ տաք ջուր ածեք (այնքան տաք, վոր ձեռքը նրա մեջ հաշվվ կարողանա դիմանալ), խսկ մյուսի մեջ սառը Խոր ամանի մեջ լցրեք հավասար չափով տաք և սառ ջուր։ Գավաթներից մեկի մեջ զրեք աջ ձեռքը, մյուսի մեջ ձախը և պահեցեք այդպես լերեք բոլոր։ Հանելով ձեռքներդ գավաթներից, լերկուսը միաժամանակ իջցրեք գոլ ջրով խոր ամանի մեջ։ Յեղ զարմանալի բան, միևնույն ջուրը ձեզ կթվան սառը և տաք։ Այն ձեռքի համար, վոր տաք ջրումն եւ գտնվել, խոր ամանի ջուրը սառն և թվում։ Սառը ջրում գտնված ձեռքի համար՝ ամանի ջուրը տաք և թվում թաղնիսի նախասենյակը ձեղ տաք և թվում, լերը դուք մտնում եք այնտեղ փողոցից, նույն նախասենյակը զով և թվում, լերը դուք այնտեղ վերադառնում եք բաղնիսից։ Այս դիտողություններն ու փորձն ապացուցած են, վոր չի կարելի հույս գնել զգայության վրա և վոր շոշափելիքով մարմի ջերմային վիճակը կամ, ինչպես ֆիզիկովի մեջ ասում են, բարեկառանությունը վրոշելիս, կարող ենք սխալանքի մեջ ընկնել։ Այդ սխալներից կարելի լե խուսափել, լեթե բարեխառնությունը չափելու համար դորձածնք ամենքին ծանոթ ջերմաչափը (նկ. 4)։

**Նկ. 4. Ջերմաչափ.**  
Առաջըստյուն դարձեք ձախ ջերմաչափի վրա, և յերկու ցուցման ունիք, առաջին մասին մի մասը կամ ուրիշ հեղուկով։

Առաջըստակի մյուս ծավալը զոդված է։ Անմիջապես ջերմաչափի վրա կամ առաջն տախտակի վրա, վորին նա ամրացված է, բաժանումներ են զընդագած, վորքան բարձր լինի բարեխառնությունը, վորի մեջ գտընդում և ջերմաչափը, հեղուկն այնքան ավելի վեր և բարձրանում խողովակի մեջ։

Վորպեսզի ավելի լավ ծանոթանաք ջերմաչափի մեջ զիտագու



իցրեութներին, կատարեցնք այն փորձերը, վորոնք նկարագրված են և լաբորատոր աշխատանքի մեջ և այդ փորձերի հիման վրա համապատասխան լեզրակացություններ հանեցեք։

**Լաբորատոր աշխատանքներ** կատարելիս անհրաժեշտ ե պահպանել մի շարք կանոններ, վորոնք կոզնեն ձեղ հանգիստ աշխատելու և ձեռքբերելու ձեղ անհրաժեշտ դիտողություններն ու լեզրակացությունները։ Այդ կանոնները չպահպանելու դեպքում գուք վոչ միայն աշխատանքից չեք ստանա անհրաժեշտ արդյունքները, այլև գուցե մի շարք անախորժություններ պատճառեք թե ձեղ և թե ձեր լուսկերներին։

**1. Աղակներով աշխատելիս, բարձրածայն խառաջությամբ մյուս ողակներին մի խանգարեք։**

**2. Լաբորատորիայում ձեր սղակի անդամների յեկ դասառուի մեջ միայն ըսուկով խօսեցեք։**

**3. Աշխատանի մի ձեռնարկեք, առանց ծանօթանալու երան նպատակի յեկ կատարման յեղանակի հետ։**

**4. Ստուգեցիք աշխատանի համար բոլոր աներածեաց գործիքներն սացե՞լ եք, թե վոչ։**

**5. Ձեր տեսրակում գրեցեք բոլոր այն դիտողությունները, վոր ձեզ նաջողվում ե կատարել յեկ պատասխանեցեք աշխատանի մեջ լեղած բոլոր հարցերին։**

**6. Աշխատանի ավարտելուց հետո գործիքները պետք ե բերել նույն վիճակին, ինչ վիճակում դուք սացել եք աշխատանի համար։**

**Ըստություն սէւսսանք № 1.**

**Տվյալ աշխատանի նպատակը. — ներևելի, քե ամացնելիք ինչ կատարվում նեղուկի հետ։**

**ՉՈՐՄԵԹՆԵՐ ԵԵՎ ՆԵՐԻԹԵՐ. — Կոլբ կամ զեղատան շեշ, ապակյա խողովակի մի կոռը ուստինե բցանով՝ կոլբ համար, զագոթ կամ խոր աման ջրի համար, ներկած լուր կամ մի այլ հեղուկ (կերասին, սպիրտ), ուստինե փառքիկ ողակ, ոտք ջուր։**

**1. Կոլբը մինչեւ բերանը լցրեք ներկած ջրով։**

**2. Խցանով, վորի մեջ խողովակի ե մտցրած, կոլբի բերանն այնպիս փակեցեք, վոր ջրի մի մասն անցնի խողովակի մեջ։**

**3. Խողովակի վրա հաղցրեք ուստինե սղակը, նրանով նշեցնեք ջրի մակարդակը խողովակի մեջ (նկ. 5),**

**4. Վոր անոթի մեջ տաք ջուր ածեցեք և կուրն իջցրեք նրա մեջ։**



Ակ. 5.

Հետևեցիք, թե ինչպես և փոխվում հեղուկի մակարդակը խողովակ մեջ,  
5. կոլը գուրս հանեցիք տաք ջրից և դիտեցիք,  
թե ինչպես և փոխվում հեղուկի մակարդակը խողովակի մեջ:

Հեղուկը տաքացնելիս ինչպես և փոխվում նրա ծավալը:

Հեղուկը սառեցնելիս ինչպես և փոխվում նրա ծավալը:

Ի՞նչպես կարելի է բացատրել հեղուկի մակարդակի իջնելը խողովակի մեջ, իերը կոլը դեռ նոր ենք դրել տաք ջրի մեջ:

Ի՞նչն և ավելի շատ փոփոխվում տաքացնելիս, կոլը ծավալը, թե նրա մեջ լցված հեղուկինը:

Ստուգեցիք, թե զրի առաք արդյոք հարցերի պատասխանները:

6. Կարգի բերեք գործիքները և ձեռներդ լվացեք:

### Զ Ե Ր Մ Ա Զ Ա Փ

Զերմաշափը հիմնվում է նրա վրա, վոր մարմինները ջերմությունից ընդարձակվում են: Զերմաշափի ցուցանակի վրա գծված բաժանումները հնարավորություն են տալիս դատելու այն տեղի տաքացման աստիճանի մասին, վորտեղ դուռվում է ջերմաշափը:

Վորպեսպի տարբեր ջերմաշափերի վրա բաժանումները միևնույն բարեխառնությունը ցույց տան, անհրաժեշտ ե պայմանավորվել, թե ինչպես պետք է գծել այդ բաժանումները:

Չերմաշափի այն կետը, վորի վրա կանգնեաւ և հեղուկի մակարդակը, յերբ նու սուզվում է հարված սառուցի մեջ, նաև ականական է օ բիսետանուն: Իսկ այն կետը, վորին հասնում է հեղուկի սյունը յեռացող ջրի գոլորչիների մեջ, նաև ականական է 100 բիսետանուն:

Օ-ի և 100-ի միջև մեջած տարածությունը բաժանվում է հարյուր հավասար մասերի, և նույնպիսի բաժանումները գծվում են նաև 0-ից ցած: Յուրաքանչյուր մասը կոչվում է աստիճան: Այս ինդանակով պատրաստված ցուցանակը կոչվում է Ցելսիուսի ցուցանակ և ջերմաշափի վրա նշանակվում է C ասուով: 15° C նշանակումը կարդացվում է ալիքն — 15° Ցելսիուսով (կամ Ցելսիուսի 15°, կամ 15° ըստ Ցելսիուսի): 0-ից ցած գտնվող բաժանումները նշանակվում են — (մինուս) նշանով: — 5° C նշանակումը կարդացվում է՝ 0-ից 5° ցած Ցելսիուսի ջերմաշափով (կամ — 5° ըստ Ցելսիուսի): Ցելսիուսի ցուցանակն ընդունված է գիտության մեջ և հանդիսանում է մեր Միության մեջ ճանաչ-

ված պաշտոնական ցուցանակը: Բայցի Ցելսիուսի ցուցանակ կրող ջերմաշափերից կարելի է յերբեմն հանդիպել նաև Ռենդլուրի ցուցանակով ջերմաշափերի: Ռենդլուրի ցուցանակի վրա հալվող սառուցի բարեխառնությունը նշանակվում է 0 թվանշանով, իսկ ջրի լեռացման բարեխառնությունը նշանակվում է 80°-ով: Այսպիսով խողովակի այն յերկարության վրա, վորտեղ Ցելսիուսով տեղափորվում է 100 բաժանումնք, Ռենդլուրով տեղափորվում է 80: Սրա հետևանքով Ռենդլուրի բաժանմունքներն ավելի խոշոր են, քան Ցելսիուսինը: Ռենդլուրի ցուցանակի մեջ բաժանմունքը համապատասխանում է Ցելսիուսի 1,25 բաժանմունքին: Ցելսիուսի և Ռենդլուրի ջերմաշափերով չափված միեւնույն բարեխառնությունները կարտահայտվեն տարբեր թվերով: Մի ցուցանակի ցուցմունքների վերածումը լրուսին դժվարություն չի ներկայացնում:

Որինակ. Ցելսիուսի ցուցանակով քանի աստիճանի՝ ին համապատասխանում Ռենդլուրի 20°-ը:

Լուծում. Ռենդլուրի յուրաքանչյուր աստիճանը համապատասխանում է Ցելսիուսի 1,25°-ին, նշանակում է 20°-ը կհամապատասխանի  $20 \times 1,25 = 25^{\circ} C$ :

Որինակ. Ցելսիուսի ջերմաշափով 75° և Քանի աստիճան և ցուցանիքը Ռենդլուրի ջերմաշափից:

Լուծում. Քանի վոր Ռենդլուրի աստիճաններն ավելի խոշոր են, ապա նրանց թիվը 75-ից պակաս և լինելու:

$$75^{\circ} : 1,25 = 60^{\circ} R$$

Ցելսի ձեր գպրոցում առանց ցուցանակի ջերմաշափեր կամ, փորձեցիք նրանց համար ցուցանակներ պատրաստել:

Վարուսություն ԱՇԽԱՏԱՆ:

Աշխատանի նպատակը լարուել ջերմաշափի համար ցուցնակի պատրաստել:

Ջերմաշափի համարատուն կետերն են սառուցի հալման կետը և ջրի լեռացման կետը:

ԴԱՐՄԻՔՆԵՐ ՑԵԼՍԻԹԵՐ. Ճաղար, շատակի, յերշար կակորդով կոլը, ողիք-առյուղ, սառուցի կամ ձյուն, բաժակ, առանց ցուցանակի ջերմաշափ (նկ. 6):

1. Գիտեցեք, թե ինչ կաղմություն ունի ձեզ տրված ջերմաշափը և նկարեցեք ձեր տեսրակում:

2. Դրեք ձագարը շատակի ողակի մեջ, լցրեք ձևուով և մեր բաժակը զրեք տակը:

9. Մատիտով ձյան մեջ փոքրիկ փոս արեք և ալդ փոսի մեջ դրեց ջերմաչափի գնդիկը, ձուռը թեթևակի տափափեցեք ջերմաչափի ջուրջը և թրջեցեք ջրով:

4. Հետևեցեք սնդիկի սյան իշնելուն: Ցերը սնդիկը կանդ առնի ջերմաչափի վրա նշեցեք այն կետը, վորտեղ կանդնում և սնդիկի մակարդակը:


5. Կոլրի մեջ մի քիչ տաք ջուր ածելով (<sup>1/4</sup>-ի չափ), նրա կոկորդն ամրացրեք շտատիվի սնդմակի մեջ:

6. Շտատիվի վրա ամրացրեք նաև ձեր ջերմաչափի այնպես, վորտա մասի կոլրի մեջ և նրա գնդիկը լերկու սանտիմետրի չափ բարձր լինի կոլրի ջրի մակարդակից (տես նկ. 7):

7. Սպիրտալրոցը դնելով կորրի տակ, ջուրը լինացրեք:

8. Հետևեցեք սնդիկի սյան բարձրանալուն: Ցերը սնդիկի շարժումը կանդ առնի, նշեցեք այն կետը, վորի դիմաց գանգում և սնդիկի մակարդակը:

Ի՞նչ թիվ պետք են դնել ալդ կետի մոտ:



Նկ. 7. Աշուատանթի սարքավծքը:

Նկ. 8.  
Առանց ցուց-  
նութիւնի  
մաշտիւ-

Ջերմաչափի հիմնական կետերը վորոշված են: Այժմ պետք է ցուցնակը պատրաստել: Այն գործարաններում, վորտեղ ջերմաչափի են պատրաստում, ցուցնակը գծում են հատուկ բաժանիչ մեջենալիք միջոցով: Դուք ես ոգտվեցեք մի փոքրիկ սարքով, վորը ձեզ կոզնի ջերմաչափի ցուցնակը 10 հավասար մասի բաժանելու:

9. Մեկ տողանի թղթի վրա հաշվեցեք տասնմեկ տող: Առաջին և վերջին տողերի մոտ նշանակեցեք 0 և 100 թվերը:

10. Ցեր ջերմաչափը պառկեցրեք ալդ թղթի վրա այնպես, վոր ջերմաչափի գերովի գծիկը համընկնի թղթի զերովագծի հետ, իսկ 100-ի գծիկը՝ թղթի 100-ով նշանակված տողի հետ: Դրա համար, իհարկե, հարկավոր կլինի ջերմաչափը պառկեցնել թղթի վրա վոչ թե թվերին ուղղահայտ ուղղութեամբ, այլ թիւք (նկ. 8):


11. Այժմ թղթի այն գծերը, վորոնց մոտ թվեր նշանակված չեն, կրածանեն ցուցնակը 0-ի և 100-ի միջև տասը հավասար մասերի:

Նշանակեցեք այդ բաժանումները ջերմաչափի վրա և նրանց գեմ գրեցեք համապատասխան աստիճանները: Ցերե կամենում եք աշըաչափով նշանակեցեք ավելի մանր բաժանումները (բաժանումները շաբառ նակեցեք նաև 0-ից ցած):

12. Ցերկու-լերեք ողակ միաժամանակ թող իջեցնեն իրենց շինած ջերմաչափերը միենույն ջրի մեջ և չափեն ալդ ջրի բարեխառնությունը:

13. Ձեր ջերմաչափերի ցուցմունքները համեմատելով դասառուի մոտ գտնվող ստուգիչ ջերմաչափի ցուցմունքի հետ, պարզեցեք այն սխալները, վորոնք կարող են առաջացած լինել ցուցնակը պատրաստելիս:

14. Սրբեցեք ջերմաչափի վրա ձեր գծած բաժանումները և կարգի թիւքները բոլոր այն գործիքներն ու սնդմակը, վորոնցից դուք սղբավել եք:



Նկ. 8. Թե ինչպես պետք է բաժանել ցուցնակը 10 մասի մեջ սղբավել թիւքի սիջութիւն:

### Խնդիրներ յեվ հարցեր

1. Ցերիսուսի ջերմաչափն իջեցրել են հալվող սառուցիք մեջ: Վա՞ր թվի հանդեպ պիտի կանգնի սնդիկի սկզբնը:

2. Ջերմաչափի վրա սնդիկի սյան մի կողմում գծված և Ցերիսուսի ցուցնակը, իսկ մյուս կողմում Ռենմյուրինը: Սնդիկը կանգնեց 100 թվի դիմաց ըստ Ցերիսուսի, քանի աստիճան և ցույց աալիս Ռենմյուրի ցուցնակը:

3. Ռենմյուրի ջերմաչափը կարելի՞ է ճիշտ համարել, յիթե հարվոդ սառուցիքի մեջ նրա սնդիկի սյունը կանգնում է 1 աստիճանի վրա:

4. Ռենմյուրի ջերմաչափով սենյակի բարեխառնությունը 20° է: Ի՞նչպիսի բարեխառնություն ունի այդ սենյակի ողն ըստ Ցերիսուսի ջերմաչափի:

5. Հետեւալ բարեխառնությունները Ռենմյուրի աստիճաններից վերածեցեք Ցերիսուսի աստիճանների:

$$10^{\circ} R, 40^{\circ} R, 16^{\circ} R, 80^{\circ} R, -40^{\circ} R$$

Յ. Հետևալ բարեխառնությունները Յելսիուսի աստիճաններից վեհածեցեք Ռենոմյուրի աստիճանների:

— 20° C, 5° C, 20° C, 50° C, 2° C.

7. Աղի ջերմությունը կեսորին 30° R էր, իսկ յերեկոյան 20° R: Ցելսիուսի ջերմաչափով բարեխառնությունը քանի աստիճանով է ընկել:

8. Վեր ջերմաչափի վրա աստիճաններն ավելի խոշոր են, Ռենոմյուրի, թե Յելսիուսի:

9. Սնդիկը սառչում է — 39° C բարեխառնության մեջ: Սառնամանիքները համում են մինչև — 35° R: Մոդիկի ջերմաչափերը պիտանի կարող են լինել գրաֆ բարեխառնությունը չափելու համար:

10. Մենակի բարեխառնությունն ըստ Ռենոմյուրի 12° է, Քանի աստիճան և ցուց տալիս Յելսիուսի ջերմաչափը:

11. Սառուցը հալվում է 0° բարեխառնության մեջ ըստ Յելսիուսի ջերմաչափի: Ռենոմյուրի ցուցնակի վեր բաժանումն է համապատասխանում այդ բարեխառնությունը:

12. Յերացող ջրի բարեխառնությունը Յելսիուսի ջերմաչափի վրա նշանակված է 100°: Այդ բարեխառնությունն ինչ թվով է նշանակված Ռենոմյուրի ջերմաչափի վրա:

13. 20° R-ն արտահայտեցեք Յելսիուսի աստիճաններով:

14. Մարդու մարմնի բարեխառնությունն է 37° C: Վերածեցեք այդ բարեխառնությունը Ռենոմյուրի աստիճանների:

15. Ցանկանում ենք ջերմաչափի խողովակի վրա լուրաքանչյուր աստիճանի համար խոշոր բաժանումներ ունենալ: Այդ նովատակի համար ինչպիսի ջերմաչափի գնդիկ պետք է ընտրել և ինչպիսին պետք է լինի խողովակի անցքը:

16. Մի լեզանակ մտածեցեք դպրոցական պատրաստի ջերմաչափին ստուգելու համար և այդ լեզանակը խմբակում քննելուց հետո, ստուգումը գործնականապես կատարեցեք:

17. Ռենոմյուրի ջերմաչափով 100° է, քանի աստիճան և ցուց տալիս Յելսիուսի ջերմաչափը:

ՀԱԲՈՒՏԱՄՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔ Խ. 3.

Աշխատանքի նպատակը.— հետեւի թե ի՞նչպես և փոխվում չըն բարեխառնաւրյունը, յերբ ցուցը տարածվում են:

ԳՐԾԻՔՆԵՐ ԵՅՎ ՆՅՈՒԹԵՐ. ցանցով յեռատանի, բաժակ կամ թիթեղյա ըանկա, ջերմաչափ, սպիրտայլուց, լուցի:

1. Բաժակը կիսով չափ լցրեք ցուց և զրեք յեռատանու ցանցի վրա:

2. Վորոշեցեք ջրի բարեխառնությունը, ջերմաչափն ընկղմելով բաշակի մեջ, վորքան կարելէ լի, խոր:

3. Գրի առեք ջերմաչափի ցուց տված բարեխառնությունը:

4. Թող ընկերներից մեկը հետեւ ժամանակին ժամացուցի, վրա և գողեն մի անգամ նշան տա: Մնացածները տրված աղյանշանի հետ նշանակում են ջրի բարեխառնությունը, ջերմաչափով խառնելով ջուրը:

5. Առաջին աղյանշանի հետ վառել սպիրտայլուցները և դնել ցուց տված բաժակների տակ:

6. Յերկրորդ և հաջորդ աղյանշանի ժամանակ պետք է ջերմաչափով բարունակ խառնելով ջուրը վորոշել նրա բարեխառնությունը և գրել աղյուսակում:

### Աղյուսակ

Ժ Ա Մ Ա Ն Կ Կ	Բարեխառնություն
Սկզբը . . . . .	
1 բողք անց . . . . .	
2 բողք անց . . . . .	
3 բողք անց . . . . .	

Աշխատանքը շարունակել, մինչև վոր ջուրը յեռա և մոռ հինգ բար պետք անցնի յեռալուց: այնուհետև հանգնել սպիրտայլուց և դիտողական թրւնը հինգ բողք ևս շարունակելը:

7. Վերջացնելով աշխատանքը, դիտեք աղյուսակը:

Դիտելով ձեր գրած բարեխառնությունները, դուք սեսնում եք, վոր մինչև ջրի յեռալը նրա բարեխառնությունը շարունակ բարձրանում է: Հենց վոր ջուրն սկսում է յեռա, բարեխառնությունը դադարում է փոփոխվելուց, չնայած վոր տաքացնելը շարունակում ենք: Սպիրտայլոցը հանգնելուց հետո բարեխառնությունն ընկնում է:

Եղանակացուրյուն. օրի յեռալու ընթացքում նրա բարեխառնությունը հաստատուն է մնում:

Ի՞նչՊԵՍ ՊԵՏՎԵԼ ԶԵՐՄԱՂԱՓԻՅ

Դուք տեսաք, վոր ջերմաչափի մեջ հեղուկը բարձրանում է, յերեք ջերմաչափը տաքանում է և իջնում է, յերեք ջերմաչափը հովանում է և նշանակում է այն բարձրությունը, վորին հասնում է հեղուկը ջերմաչափի մեջ, կախում ունի ջերմաչափի բարձրությունից և, ջերմաչափի սղնությամբ բարեխառնությունը չափելիս, մենք, ճիշտն ատած,

Հափում ենք հենց ջերմաչափի բարեխառնությունը, այս պատճառով, ինարկե, բարեխառնությունը մենք սխալ վորոշած կլինենք, ինթե ջերմաչափից սխալ ձևով ոգտվենք: Յենթադրենք, կամենալով չափել սենյակի ողի բարեխառնությունը, մենք ջերմաչափը կախում ենք տաք վառարանի մոտ: Իհարկե, տվյալ դեպքում մենք սխալ պատճառիսան կրտանանք: Սենյակի ողի բարեխառնությունը ցույց տալու փոխարեն ջերմաչափը ցույց կտա, թե մինչև վիր աստիճան և ինքը տաքացել վառարանից: Սենյակում ջերմաչափը պետք ե կախել ներսի պատից, վառարանից հեռու: Յեթե մեր նպատակն ե չափել դրսի ողի բարեխառնությունը, ապա ջերմաչափը պետք ե կախել դուրսը, ստվերում: Հեղուկի բարեխառնությունը վորոշելու համար պետք ե ջերմաչափն ընկղմել փորձի յենթակա հեղուկի մեջ և, հեղուկի մեջ թողնելով, նկատել այն մոմենտը, յերբ նրա մեջ գտնվող հեղուկի սյունը դադարում ե փոփոխվելուց: Բարեխառնությունը վորոշելու համար վոչ մի դեպքում ջերմաչափը չպետք ե դուրս հանել հեղուկի միջից: Հեղուկից դուրս հանված ջերմաչափը սխալ ցուցմունք ե տալիս: Սենյակային & քիմիական ջերմաչափերի մեջ սնդիկի սյունը պետք ե շարունակ ամբողջական լինի (կորված նինի): Ջերմաչափը ցնցելիս սնդիկի սյունը կարող ե կտրվել: Այդ սյունը գարձալ կարելի լի միացնել՝ ջերմաչափի գնդիկն զգուշությամբ տաքացնելով գոլ ջրէ: մեջ:

### ԲԱՐԵԽԱՐԱԿԱՆ ՈՒՍՏԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՖԻԿԸ

Շատ հաճախ հարկավոր ե լինում դիտել վորուելութիւնը յերեսութիւնը բարեխառնությունը վոչ թե մի անգամ, այլ շատ անգամ, վորոշ ժամանակամիջոցներից հետո: Կարելի լի, իհարկե, զրի առնել մեր գտած բարեխառնությունները, բայց կարելի լի նաև բարեխառնությունների գրաֆիկ կազմել, վորի վրա բարեխառնությունների փոփոխությունն ավելի լավ ե նկատվում, քան գրանցումներով: Այդ գրաֆիկը պատրաստելու համար վերցնում են ցանցապատ թուղթ: Հորիզոնական գծերի վրա պալմանական կերպով ներկայացնում են վորոշ մեծության ժամանակամիջոցներ, ուղղաձիգ գծերի վրա նշանակում են ժամանակի տվյալ մոմենտներին համապատասխանող բարեխառնությունները: Գրաֆիկի կառուցումն ավելի հասկանալի կլինի կոնկրետ որինակով:

Որինակ. Վաղարշապատցի բատրակ Մելքոնյանը «Սոցիալիստական պյուղատնտեսություն» թերթի հանձնարարությամբ դիտողություններ եր կատարում խրձարանի բարեխառնության վրա, ցորենը չորսցներ:


Դիտողության արդունքները գրված են հետևյալ աղյուսակում:

Դիտողության ժամանակը	Բարեխառնությունը
Մինչև չորացումը . . . . .	-10
1 ժամ անց . . . . .	-5
2 . . . . .	25
3 . . . . .	32
4 . . . . .	36
5 . . . . .	36
6 . . . . .	25


Ցանցապատ թղթի վրա կազմեցեք բարեխառնությունների գրաֆիկը (տես. նկ. 9):

Մի հորիզոնական գծի վրա վերցնում ենք փորձում տրված ժամանակներին համապատասխան լոթ կետ: Այդ հորիզոնական գիծը կարող մի ուղղաձիգ գծի վրա նշանակում ենք բարեխառնությունները 5° հեռավորությունների: Մեր գրանցած տվյալները նշանակում ենք փոքրիկ շրջաններով: «Մինչ չորացումը» գծի վրա նշումը ենք -10 վանդակիկը, 1 ժամ գծի վրա՝ -5 և այլն: Միացնելով նըշված կետերը (փոքրիկ շրջանները) անընդհատ գծով կստանանք բարեխառնությունների փոփոխման գրաֆիկը՝ կախված ժամանակից:

10-րդ նկարում բերված ե հիվանդի բարեխառնության գրաֆիկը: Այդ նկարի պետք է գծել գրաֆիկի վրա դուք պարզ կարող եք անդամանական պատճենի վերցնել և կրիզիսը լինել և լինել և ալդ կրիզիսն անցել և մերը և հիվանդի բարեխառնությունը դարձել նորմալ:



Դրաֆիկորեն պատկերացրեք այն տվյալները, վոր դուք ստացել եք  
№ 3 լաբորատոր աշխատանքի ժամանակը:



Նկ. 10. Հիվանդի բարեխառնության գրաֆիկը. Ուզդաձիք դժերն իրարժ բուժանում են հիվանդության արերը. Հողբուժական դժերը ցույց են առ լիս բարեխառնությունները. Բարեխառնությունը նշանակված է օրուկան 2 անգամ՝ առավել և յերեկո. Որինակ՝ հիվանդության ծ-րդ որվա առավել բարեխառնությունը յեղել է  $39,6^{\circ}$ , նույն որը յերեկոյան՝  $39,8^{\circ}$ .

#### ԽԱՐԱՔԻ ՀԻՎԱՆԴԵՐ

1. Ըստ գրաֆիկի հիվանդության կրիզիսը յերբ ե յեղել.
2. Յերբ և վրաքան ե յեղել հիվանդի ամենաբարձր բարեխառնությունը:
3. Յերբ և վորքան ե յեղել հիվանդի ամենացած բարեխառնությունը:
4. Կազմեցեք հացի չորացման ժամանակ բարեխառնությունների գրաֆիկն ըստ «Սոցիալիստական գյուղատնտեսություն» թերթի հսկիչթղթակից Բաղդասարյանի դիտողությունների:

Դյուլասնեսն Բարեխառնությունի խցանանք

Դիտողության ժամանակը	Բարեխառնությունները	Ծանոթություն
Չորացում սկսելուց առաջ .	2	Փողոցում $15^{\circ}$
$2\frac{1}{2}$ ժամ անց . . . . .	32	առանձանիք
$4\frac{1}{2}$ . . . . .	45	
$6\frac{1}{2}$ . . . . .	49	
$7\frac{1}{2}$ . . . . .	58	
$8\frac{1}{2}$ . . . . .	60	առաջացման վերջը
$10\frac{1}{2}$ . . . . .	57	

5. Մի ամսվա ընթացքում ամեն որ զրի առեք դրսի ողի բարեխառնությունն առավոտյան ժամը 7-ին, ցերեկվա ժ. 1-ին և յարեկոյան ժ. 9-ին (աշխատանքը բաժանելով իմբի բոլոր աշակերտների միջն): Գրանցումներն ավարտելուց հետո գրաֆիկ կազմեցեք:
6. Տեսրակի մեջ ըլանկ պատրաստեցեք (տես որինակը) ողի բարեխառնության դիտողությունները գրանցելու համար և ամրող խմբով կազմակերպեցեք բարեխառնության սիստեմատիկ դիտողություն:


ԲԱՆԿ Ն.

Ողի բարեխառնության դիտողություն

Ամբողջ տարի

Ամսաթիվը	Զերմաշափի ցուցմունքները Ցելսիուսի աստիճաններով			
	Առավոտյան	Ցերեկ	Ցերեկոյան	Որվա միջինը
1				
2				
3				
4				
5				
6				
7				
և մինչև				
31				

Միջինը՝ ամսվա ընթացքում



## ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՐՄԱՉԱՓԸ

Բժշկական ջերմաչափը (նկ. 11) ունի 35-ից մինչև 42° C ցուցնակ, այսինքն այնքան, վորքան կարող ե լինել կենդանի մարդու մարմնի բարեխառնությունը: 35°-ից ցած և 42°-ից բարձր բարեխառնության դեպքում մարդը մեռնում է: Քանի վոր հիվանդին բժշկելիս նրա մարմնի բարեխառնության ստույգ վորոշումը շատ կարեռ է, բժշկական ջերմաչափի աստիճանները բաժանված են տասնորդական մասերի: Վորպեսզի ջերմաչափի բաժանումները խոշոր լինեն և հնարավոր լինի նրանց վորոշակի բաժանել տասնորդական մասերի, ջերմաչափի գնդիկը՝ նրա նեղ անցքի համեմատությամբ շատ մեծ են շնուռամ: Մեծ ծավալով սնդիկը թեթևակի տաքացնելուց՝ մեծ փոփոխության և լենթարկվում նրա պահ բարձրությունը: Քանի վոր տվյալ ջերմաչափի վրա չկա վոչ 0° և վոչ 100°, ապա, բնական և, վոր նրա բաժանումներն այն ձևով չե կարելի գծել, ինչպես դուք գծում ենիք ջերմաչափ պատրաստելիս. դրա համար այսպես են վարդում. նոր ջերմաչափը համեմատում են մի շատ ճիշտ ջերմաչափի հետ, վորի վրա թե 0° կա և թե 100° նոր պատրաստվող ջերմաչափն որինակերպ ջերմաչափի հետ միաժամանակ գնում են ջրի մեջ և, փոփոխելով ջրի բարեխառնությունը, վորոշում են նոր ջերմաչափի բաժանումները:

Վորպեսզի ջերմաչափն ընդունի մարմնի բարեխառնությունը, նրան միքանի բոպեյով տեղավորում են թեկի տակը. Մնդիկը դրա հետեանքով բարձրանում է, բայց, լեթե ջերմաչափը մարմնից հեռացնենք, սնդիկի սյունն ինքնաբերաբար չե իջնում: Դրա պատճառն այն է, վոր ջերմաչափի անցքը մի տեղում (գնդիկից վեհ վերև) շատ նեղ է, սնդիկն ընդարձակվելիս հեշտությամբ նրա միջով բարձրանում է, բայց սեղմիլելիս՝ կորովում և անցքի մոտ և այլև հետ չի գնում գնդիկի մեջ: Նշանակում ե ջերմաչափը մարմնից հեռացնելիս ցուց և տալիս ամենաբարձր բարեխառնությունը, վորին նա հասել երա տաքանալով մարմնից: Մնդիկը դարձյալ գնդիկի մեջ մտցնելու համար պետք ե բանել ջերմաչափի գլխից և ուժեղ կերպով թափահարել:

Նկ. 11. Բժշկական ջերմաչափ:




## ԱՐՈՐԱՅՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ № 4.

Աշխատանքի նպատակը. դիտել, թե տաքացնելիս ի՞նչպես ե փոխվում ողի ծավալը:


ԳՈՐԾԻՔՆԵՐ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐ. Չոր կոլը, ապակյա խողովակ ունտինե խցանով, մի բաժակ ներկած ջրով, քարդան՝ տաք ջրի համար, մի կուռ ունտինե խողովակ:

1. Խցանը խողովակի հետ մտցրեք կոլի կուռողի մեջ և թողեք վոր կոլը մի քիչ մնա սկզբանի վրա:

2. Կոլը բունեցնեք ունտինե խցանից և կոլից դուրս յեկող ապակյա խոռոշական մասերի մասնակին մատուցնելու համար:



Նկ. 12.



Նկ. 13. Այդ ինչ պղպջակներ են գուրագալիս խողովակից:

Պղպջակն իջեցրեք ներկված ջրով բաժակի մեջ (ապակե խողովակի մեջ մի քիչ ջուր կմտնի (Նկ. 12):

3. Ձեռքի ափը զրեք կոլի հատակին և դիտեցեք, թե ի՞նչ ե կտառվում խողովակի այն ծայրում, վոր գտնվում և ջրի մեջ:

Ձեր ձեռքը տաքացնում ե կոլը և սրա մեջ գտնվող ողը:

Այդ ինչ պղպջակներ են դուրս գալիս ապակե խողովակի ծալըից:

4. Վեցրեք ձեր ձեռքը և հետեւցնեք այն լեռութիւն, վոր տեղի լեռնենում խողովակի ծալըում:

5. Թուլլ չտալով, վոր ջուրը բարձրանա կոլի մեջ, ապակե խողովակը հանեցնեք ջրից և խցանը՝ կոլից:

6. Թափեցնեք ապակե խողովակի մեջ հավաքված ջուրը, չորացրեք խողովակը և նորից հավաքեցնեք ամբողջ սարքն այնպես, ինչպես հավաքված եր աշխատանքի ժամանակ:

7. Ապակե խողովակի վրա հազցրեք ունտինե խողովակի մի կտոր և քարդանի մեջ տաք ջուր ածեցնեք:

8. Անտինե խողովակի ծալրն իջեցնելով ներկված ջրով բաժակը՝ մնջ, կոլը ընկղմեցեք տաք ջուր պարունակող քարղանի մնջ և հետեւ վեցեք ուստինե խողովակի ծալրում տեղի ունեցող լերևութիւն:

9. Կոլը տաք ջուր մնջ թողեք այնքան ժամանակ, մնչ կոր ալլես պղղակներ չառաջանան, այնունետեւ տաք ջուր հանեցեք, առաջան առանց բաժակից հանելու ուստինե խողովակը:


Ի՞նչ է տեղի ունենում: Ի՞նչպես եք բացատրում այդ լերևութը ՀԱԲՈՒՏԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ Հ 5.

Տվյալ աշխատանի նպատակը. հետեւի, թե տաքացնելիս ի՞նչպես ե փոխվորմ զանազան մետաղալարերի յերկարությունը:

ԳՈՐԾԻՔՆԵՐ ՅԵՎ ՆՑՈՒԹԵՐ. Մետաղալարի մի ուղիղ կտոր—հյուսելու ժաղը՝ յերկարությամբ, ասեղ, բարակ տաշեղ, սեռակ, սպիրտայրոց, յերկու փայտե չորսից՝ միենույն բարձրությամբ, մի առափ լուցկի:

1. Տաշեղը դրեք ձեր մատի վրա, աշխատելով, վոր նրա վոչ մի ծարը ծանը չկշռի:

2. Նշեցեք տաշեղի այն տեղը, վորով նա հենվում և մատի վրա:



Նկ. 14. Ցուցանն ի՞նչու յե շարժվում, յերբ վառում ենք սպիրտայրոցը:

3. Նշանակված տեղում ասեղը մտցրեք տաշեղի մեջ:

4. Չորսվակները կանգնեցրեք այնպես, ինչպես ցուց ե տրված 14-րդը՝ նկարում և նրանց վրա դրեք ճաղը:

5. Ճաղի մի ծալրը սեռակով ամրացրեք չորսվակին, միուս ծալրը՝ տակ դրեք ասեղը, վորի վրա հաղցրած ե տաշեղը: Տաշեղը պետք է դրվի չորսվակի ուղղաձիգ հարթության գուգահեռ և չպետք ե շոշապի: Հորսվակը:

6. Սպիրտայրոցը վառեցիք և դրեք ճաղի տակ:

Ի՞նչ է կատարվում տաշեղի հետ:

Ի՞նչով կարելի յե բացատրել տաշեղի շարժումը:

7. Սպիրտայրոցը հեռացրեք ճաղից և հանգցրեք: Տաշեղի հետ ինչ է տեղի ունենում:

Ճաղի յերկարությունն ինչպես ե փոխվում սառեցնելիս: Ի՞նչ բանի պետք լեկան այս փորձի մեջ տաշեղն ու ասեղը:

8. Մի կողմ դրեք ասեղը տաշեղի հետ և փորձեցրեք՝ կարելի՞ լե այսոք առանց նրան նկատել ճաղի յերկարացումը տաքացնելիս:

9. Կարգի բերեք աշխատանքի համար ձեզ տված առարկաները:


### ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՅԹ

Կաբորտառը աշխատանքների ընթացքում դուք կարողացաք պարզեց, վոր:

Պինդ, հեղուկ յել գուգային մարմինները տաքանալիս ընդարձակվում են, հովանալիս՝ սեղմվում:

**Մարմինների չափերի այլ**  
Փոփոխությունները շատ  
առարգեր են: Սպիրտայրոցի  
գուցով առաջացված ճաղն  
այնքան քիչ է փոխում իր  
յերկարությունը, վոր այդ  
փոփոխությունը պարզ աշ-  
քով դուք չեք կարող նկա-  
տել: Ճաղի աննշան յերկա-  
րացումը նկատելու համար  
հարկավոր լեղավ մի առան-  
ձին սարք ստածել \*):

Ներկված ջուրն անհամե-  
մուտ ավելի ուժեղ լընդար-  
ձակվեց. այդ փորձի ժամա-  
նակ հեղուկի մակերեսութիւն  
բարձրանալն ապահով բա-  
րակ լուղովակի միջով հնա-  
շավորություն եր տալիս ձեղ ավելի մեծ վստահությամբ դատել հե-  
ղուկի լընդարձակման մասին, քան այդ կարելի լեր անել առանց խո-



Նկ. 15. Բարակ մետաղալարը տաքացվում ե լուցկով:

Պավորություն եր տալիս ձեղ ավելի մեծ վստահությամբ դատել հե-  
ղուկի լընդարձակման մասին, քան այդ կարելի լեր անել առանց խո-

\* ) Ճաղը յերկարելով գլորում եր ասեղը, վոր և իմացաք յերկար տաշեղի շարժու-  
թը: Յեթե ասեղից ավելի յերկար ցուցան վերցնելուք, կարելի կրներ ճաղի ավելի  
չեցին յերկարացումը նկատել: Յեթե փայտ շատափվին մի մեխով (B) ամրացնենք  
AB ցուցանը (Նկ. 15), և այդ ցուցանին, B կետին շատ մատ, C կետում ամբացնենք  
CD ձգված քարտկ մետաղալարի ծայրը, առաջ մետաղալարը տաքացնելիս C ծայրը  
ժիշին:

Պովակի: Վորպեսզի ողը նկատելի չափով ընդարձակվի, բավական եթ կուլը թեթևակի տաքացնել ձեռքով։ Կուլից դուրս յեկող պղղջակները բավական համոզիչ կերպով ապացուցում են, վոր տաքացած ողն այլև չի տեղափորվում կուլի մեջ և նրա ավելորդ մասը դուրս ե գնում խողովակի միջով։

Յերկրորդ յեղակացությունը, վոր հանում ենք մեր աշխատանքից, հետևալուն ե.

Պինդ մարմինները տաքանալուց համեմատաբար Քիչ են ընդարձակվում, հեղուկների ընդարձակումն ավելի նկատելի յէ, զագերի ընդարձակումը տառ մեծ է:

Զանազան նյութերի՝ տաքացումից ընդարձակվելու վերաբերյալ կտարած ավելի մանրամասն հետազոտությունները ցուց են տալիս, վոր տարբեր պինդ մարմիններ տաքացումից միենուն չափով չեն ընդարձակվում։ Պինդ մարմինների տաքանալուց ընդարձակվելը կարելի յէ տեսնել կցված աղյուսակից, վորը ցուց ե տալիս, թե  $1^{\circ} \text{C}$  տաքացնելիս ձողի յերկարությունն իր սկզբնական յերկարության վեց մասի չափով ե ավելանում։

Պինդ մարմինների ընդարձակման աղյուսակը

Յերկաթ . . . . .	0,000011
Պղինձ . . . . .	0,000017
Ցինկ . . . . .	0,000029
Աղակի . . . . .	0,000009
Ալյումինիում . . . . .	0,000022
Գլատին . . . . .	0,000009

Այս աղյուսակից դուք տեսնում եք, վոր յերկաթն ձողի յերկարության յուրաքանչյուրը միավորը,  $1^{\circ} \text{C}$  տաքանալով, մեծանում ե իր սկզբնական յերկարության  $11$  միլիոններորդական մասով, պղինձը՝  $17$  միլիոններորդական մասով և այն։


Որինակ.— $2$  մետր յերկարություն ունեցող յերկաթյա խողովակը տաքացրել ենք  $100^{\circ} \text{C}$ ։ Նրա յերկարությունը վորքան կմեծանաւ։

Լուծում.— $1$  մետրը  $1^{\circ} \text{C}$  տաքացնելու նրա յերկարությունը կավելանա 0,000011 մետրով։ Քանի վոր մեր վերցրած դեպքում յերկաթե խողովակը տաքացվում է  $100^{\circ}$ , ապա յուրաքանչյուրը մետրը պիտի ավելանա 0,000011  $\times 100 = 0,0011$  մետրով։

Խողովակի ամեն մի մետրը յերկարելու յէ 0,0011 մետրով, իսկ քանի վոր խողովակի յերկարությունը  $2$  մետր ե, ապա նա պետք ե յերկարի  $0,0011 \times 2 = 0,0022$  մետր, կամ  $2,2$  միլիմետր։

Այս մեծությունն արդեն կարելի լի նկատել առանց վորեւ գործիքի ողնության։

Հանձնարարում ենք այսպիսի վորձ կատարել. Գտեք հին, ըստ հնարավորության յերկար գաղատար խողովակ, վոչ պակաս, քան 2 մետր յերկարության։ Նրա մի ծալքին զողեցեք ցուցան և այդ ցուցանի ուժաց, սեղանի վրա դրեք մասշտաբ (նկ. 16). Մյուս ծալքը վորեւ ձե-



Նկ. 16. Սարքած և յերկաթի ընդարձակումը վորշելու համար։

Վով պինդ ամրացրեք սեղանին։ Խողովակի միջով յեռարանից գորոշչի անցկացնելով կարելի յէ խողովակը տաքացնել մինչև  $100^{\circ}$  (Յերեանում մինչև 96), այսինքն նրա բարեխառնությունն ավելացնել մոտ  $80^{\circ}$ -ով։ Այդ ժամանակ ցուցանը, տեղափոխվելով մասշտաբի յերկարությամբ, ցուց կտա, թե վորքան ե ավելանում խողովակի յերկարությունը։

### Ի՞՞նչ ԲԱՆ Ե ՏԵԽՆԻԿԱՆ

Մաքով տեղափոխվենք հաղարավոր տարիներ առաջ և պատկերացնենք մեր նախահորը, յերբ նա առաջին անգամ դիտում եր կայծակը և այդ կայծակից առաջացած հրդեհն անտառում։ Թուզը, անդոր մարդը, շրջապատված հաղար ու մի վտանգներով, հավատում ե, թե իրեն շրջապատող ամբողջ բնությունը բնակված ե իրենից բարձր ելակներով—վողիներով, վորոնք այս կամ այն կերպ կարող են ազգել իր բախտի վրա։ Կայծակն ու հրդեհը տեսնելիս՝ մարդու առաջին զգացումը սարսափն եր այդ յերեսուլթների հանդիպ։ Մարդն ինքը գնում էր իմանում կրակ ստանալ և կրակը համարում եր մի գերբնական յերեսուլթ, ուղարկված բարձրագույն ելակի կողմից, վոր այդ ահարկուն զանով կամենում եր մարդուն զգալ իր գոյության մասին։

Հրդեհից հետո վերադառնալով հրդեհավալը, մարդն այնուհետ գըտնում ե վառվող խանձողներ և հաբանաբերում, վոր կրակը վոչ միայն ալրում ե, այլև կարող ե տաքացնել։ հանգչող խարուկի մեջ ընկած

մար կառը, պտուղներն ավելի համեղ են դարձել, Յեզ կրակին տիրանալու, նրանից ոգավել սովորելու և ցանկացած դեպքում կրակ առաջացնելու պահանջը մարդու առաջին քայլը յեղավ բնության ուժեղին տիրապետելու և նրանց իրեն ծառալեցնելու գործում:

Քանի գետ մարդը չեր սովորել կրակ ստանալը, առկայծող խանձողը նրա համար խիստ մեծ արժեք ուներ, և հատուկ մարդիկ զբաղված եյին, վոր թուց չտան խանձողի կրակը հանգչի:

Իր համար քարե գենքեր պատրաստելիս, յերք զենքին վորոշ ձեւ տալու համար քարը քարին եր խփում, մարդը նկատեց, վոր յերեմի կայծեր են թուում և առդ կայծերը չոր խոտի վրա ընկնելով վառում են վերջնիս: Կամ գուցե քարե մուրճի մեջ փայտե ձողով ծակ բանալիս մարդը նկատել ե, թե ինչպես փայտե ձողն ալրվում է: Դրանից հետո մարդն այլևս պետք չունիր առկայծող խանձողը պահելու, նա կարող եր կրակ առաջացնել ամեն ժամանակ, յերք ցանկանար: Կրակը մարդու համար դադարեց ինչ-վոր գերբնական բան, յերկնացին ուժերի նախը լինելուց: Մարդը վոչ միայն սովորեց կրակ ստանալ, այլև հպատակեցրեց նրան իր կամքին:

Դիտելով, թե ինչպես ջուրն ընկած ծառի բունը լողում ե ջրի վրա, գուցե վտանգի ըռպելին ակամա ըռնելով նրանից և զգալով, վոր նրա վրա կարելի յե լողալ ջրում, մարդու մոքով անցնում և ոգտագործել ծառի բունը լողալու համար: Բայց բնի վրա լողալն անհարմար ե. մարդը կապում ե միմբանց միքանի բներ և ստանում լաստ: Ընկույզի լորզացող կեղեկի վրա արված դիտողությունը մարդուն միտք և տալիս իրեն համար և նման մի բան պատրաստելու: Առաջին նավակը փորված ե յեղել ծառի բնից կամ կարված՝ ծառի կեղեկից: Աստիճանաբար կատարելագործելով իր նավակը, մարդը սովորեց շինել վոչ միայն թեթև մակուցիներ, այլև հսկայական նավեր յերկաթից ու պողպատից:

Դիտելով բնության յերեսությունը, գտնելով մի յերեսութի կախումը մյուսից, մարդը տեսնում ե, վոր բնությունն իր որենքներն ունի, վորոնց նա յենթարկվում ե, առանց ուշք դարձնելու մարդու վրա: Բնության որենքները նույնն են թե չարերի և թե բարիների համար, թե մեղավորների և թե արդարների համար: Մարդը զաղարում ե բնությունից վախենալուց, բնության ուժերի մեջ ինչ-վոր հրաշք կամ գերբնական բան տեսնելուց: Բնության որենքներն ըմբռնելով, մարդն աշխատում ե ոգտագործել իր հայտնաբերած որենքները և բնության ուժերը հնազանդեցնել իր կամքին: Այսպիսով առաջ ե գալիս տեխնիկան, վորը կիրառում ե բնության հայտնաբերված ֆիզիկական որոնքները գործնական նպատակների համար: Կրակը, վոր հեռավար ժամանակներում սրբազն դող եր պատճառում մարդուն, այժմ աշխատում ե գործարաններում շարժման մեջ դնելով դադլաները:

Քամին դարձնում ե հողմաղացի անիմսերը, յուրը հանում և մինչեւ արդիանց բնակարանները, նրանց նավերը տեղափոխում ե մի աերից մլուսը: Նույնիսկ արել, վոր մի ժամանակ վորպես աստված պաշավում եր, այժմ ոգտագործվում ե աշխատանքի համար: արեգակի ջերմությունից ոգտվելով մեքենաները շարժման մեջ են դրվում:

Եորհը դավոր ուժերի գորության հավատը ծագում ե այն ժամանակ, անը մարդը չգիտե յերեսությունների պատճառները և չի իմանում կառավարել այդ յերեսությունները: Հենց վոր յերեսութիւնի պատճառը պարզվում է մարդու համար, յերք նա հասկանում ե, թե ինչպես կարելի յե առաջացնել տվյալ յերեսությունի կամ խուսափել նրանից, նա այլևս չի հավատում խորհրդավոր ուժերի, այլ ինքն իր գիտության վրա հիմնվելով, կառավարում ե բնությունը: «Եերք գիտությունը մի քայլ եր անում զեղի առաջ, աստված մի քայլ եր անում դեպի հետո, իսկ ժամանակից տեխնիկան վոչ միայն վոչնչացնում ե բոլոր ոնոտիապարտություններն ու նախապաշարությունները, այլ և գործեր և ստեղծում, վորոնց առաջ գունատվում են ամենաֆանտաստիկ հեքյաթներն անգամ:

### ՊԻՆԴ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆԴՈՌՉԱԿՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՏԵԽՆԻԿԱՑՈՒՄ

Պինդ մարմինները, ինչպես դուք տեսաք, շատ քիչ են ընդարձակվում, բայց այնուամենայնիվ նույնիսկ այդ աննշան ընդարձակումը հարկավոր ե լինում ուշադրության առնելի չաշվի առնելով մարմինների ընդարձակվելը տաք վիճակում և այն հանգամանքը, վոր հոգանալիս նրանց ծավալը փոքրանում ե, կարելի յե այդ յերեսությունությունների ուժեղ սեղմում առաջացնելու համար:

Մյուս կողմից կառուցումների ժամանակ պետք ե հաշվի առնել կութի ընդարձակումը, վորպեսզի այդ ընդարձակումը չքանդի շինությունները:

Դարձենը փայտե անվի շրջանակի վրա պետք ե յերկաթե դոխ (շին) և ագցնի, վոր մի կողմից պահպանում ե փայտե անիվը փչանալուց, մյուս կողմից ամուր սեղմում ե փայտե շրջանակը: Դարձենը դոխը շինում և այնպիս, վոր նա սառը վիճակում միքիչ ավելի փոքր լինի փայտե շրջանակից: իսկ հետո ատքացնում ե, ովորից դոխի չափերը մեծանում են: Տաք վիճակում՝ դոխը փայտե շրջանակի վրա հազցնելով դարձենը լիովին համոզված ե, վոր նա ամուր պիտի նստի փայտե շրջանակի վրա և բավական պինդ սեղմի նրան: Նույն այս յեղանակով են հացցնում պողպատե «բանդամները» տրամվալիի և յերկաթուալին վաղոնների անիմսերի վրա և անիմսերի վրա:


գոնի սունին, նրա վրա հադցրած անիմսերի հետ մի ամբողջություն՝ կազմում և կոչվում եւ «անվիք» (նկ. 17):

Յերկաթուղարին կամուրջը հաստատուն կերպով չեն ամրացնում



Նկ. 17. Անվիքներ շոգնկառքի համար:

քարե հաստարաններին, վորոնց վրա կամուրջը հենվում է, այլ դնում են հատուկ թափալուկների վրա: Տարեխառնության փոխվելու հետ միասին փոփոխելով իր յերկարությունը՝ կամուրջը զլորում և ալլ թափալուկներն առանց հաստարանները քանդելու (նկ. 18):



Նկ. 18. Յերկաթուղարին կամուրջը հենվում և թափալուկների վրա:

Զրմուղի և ջրալին ջեռուցման խողովակները շենքերի պատերին ամրացվում են հատուկ կեռերի ողնությամբ, վորոնց անցքերի միջով խողովակներն աղատ կարող են շարժվել: Հաճախ պահանջվում եւ ապակու մեջ զողել մետաղալարեր: Այդ հարկավոր և լինում մի շարք ֆիզիկական գործիքների մեջ, ելեկտրական լամպի մեջ զողված են մետաղալարեր, վորոնց միջով հոսանքը մտնում է թելի մեջ: Յեթե ապակին ու մետաղալարը տաքությունից հավասարապես չընդարձակվեն, ապա կամ ապակին պետք է ճաքի և կամ ապակու և մետաղալարի միջև աղատ անցք պիտի մնա: Վորպեսզի միացումն ամուր լինի և

ամուր ել մնա բարեխառնության փոխվելու գեպքում, ընտրում են առակու և մետաղալարի այնպիսի տեսակներ, վորոնք տաքությունից հավասար չափով են ընդարձակվում: Առաջներում հարկադրված ելին լինում ապակու հետ զողել պլատինի լարեր, բայց այժմ գտել են եժան համաձուլվածքներ, վորոնցից և շինում են այդ մետաղալարերը: Բետոնի և յերկաթի միատեսակ ընդարձակում մը հարավորություն եւ ստեղծում կառուցելու յերկաթ-բնտոնից շինություններ:

Յերբ ջրալին ջեռուցման կամ զողելի առցանցման խողովակները յերկար են լինում,

հարկավոր եւ լինում խողովակաշարքի վորոշ տեղերում ողակի ձևով կորացված խողովակներ՝ կոմպենսատորներ դնել (նկ. 19): Այդ կոմպենսատորներն իրենց վրա վերցնելով խողովակների ընդարձակումը՝ սեղմքում են և դրանով անմնաս են պահում խողովակաշարքը:

Նկ. 19. Կոմպենսատոր:

Զուլած առարկաներ պատրաստելիս՝ հալած նյութը թափում են հատուկ կաղապարների մեջ, վորտեղ նրանք սառչելով պնդանում են թանի վոր մետաղները շատ բարձր բարեխառնության մեջ են պնդանում, ապա, միքանի հարյուր աստիճան հովանալով, նրանք զգալի կերպով փոփոխում են իրենց չափերը, կաղապարե չափերի հետ համեմատած: Չափերի այդ փոքրացումը հաշվի յեւ առնված կաղապարներն ավելի մեծ շինելով, քան նրանց մեջ ձուլվելիք երերը:


#### Թ Ե Ր Մ Ա Ս Կ Ո Պ

Ողի ընդարձակումը տաքությունից թույլ եւ տալիս բարեխառնության փոփոխությունները վորոշելու համար մի շատ զգայուն գործիք պատրաստել, վորն ոգտակար կլինի մեղ մոտ հետազա աշխատանքների ժամանակ: Այդ գործիքը բաղկացած եւ մետաղյա տուփից, վորը ռետինե խողովակի ոգնությամբ միացած եւ ներկած ջրով լի ապակե կորացած խողովակի հետ (նկ. 20): Տուփի մեջ գտնվող ողը տաքանալով ճնշում եւ ներկած ջրի վրա և բարձրացնում նրան խողովակի բաց ծնկի մեջ: Տուփի պարունակած ողը հովանալով սեղմքում եւ ջրի մակերնությը բաց ծնկում իշնում եւ\*):

Մի ուրիշ գործիք, վոր կարող ենք ինքնուրուցին կերպով պատրաստել, կաղմած եւ փոքրիկ փորձանոթից (Փոտոդիզորալիքի անօթներից), փակված ռետինե խողովակի միջով

\* ) Կարելի յեւ վերցնել կոշիկի ներկի տուփ, և ներսից մաքուր լվանալով նրան մի խողովակ զտել: Տուփի յերկու մասերն իրար հետ պետք եւ լավ դոգվեն,

անցնաւմ և տղիդ անկրունով կերպացած մի նեղանցք ապակե խողովակի Փարձանոթի ոչի ընդարձակումը ցույց է տալիս սնդիկի կամ ներկած



Նկ. 20. Թերմոսկոպ.

### Հարցեր յեվ խնդիրներ

1. Ի՞նչո՞ւ լերկաթուղու աելսերի միջև արանք և բաց թողնվում և նրանք կիպ չեն միացվում իրար:

2. Ի՞նչո՞ւ հեռագրաթելերը ամառն ավելի շատ են կախ ընկնաւմ, քան ձմեռը:

3. Արժե՛ թերմամանը միքը լինել ջրով, ինթե դուք ցանկանում եք այդ ջուրը լեռացնել:

4. Պինդ փակված ապակե խցանը հանելու համար հանձնարարվում և թեթև կրակի վրա զրսից տաքացնել սրվակի կոկորդը: Ի՞նչ է պատճեռը, վոր ալդ ձևով տաքացնելը կարող ե ոգնել:

5. Զուրման ժամանակ հալած մետաղը լցնում են կաղապարների մեջ, վերտեղ նա պնդանում եւ Զուրմումը կատարվում ե մոտ  $1600^{\circ}$  բարեխառնության մեջ: Ի՞նչո՞ւ կազապարն ավելի մեծ են շինում, քան ձուզելիք առարկան:

Ջրի մի կաթիւ, վորը գանվում և ապակե խողովակի հորիզոնական մասում: Գործածելիս սարքն ամրացվում է շտատիվի վրա: Այս լերկու գործիքները թեև թույլ են տալիս նկատելու բարեխառնության փոփոխությունները, բայց բարեխառնության վերաբերյալ այնպիսի ճշգրիտ ցուցմունքներ չեն տալիս, ինչպես ջերմաչափը:


Այդ գործիքները կոչվում են թերմոսկոպ կամ ջերմացույց:

6. Կարելի՞ լի արդյոք ջերմաչափ շինել սնդիկի փոխարհն կերպով գործածելով:

7. Հին, ժանդուած պտուտառը դուրս քաշելու համար նրա վլխին մոտեցնում են տաք զումիչը և նրանով տաքացնում պըտուտակը: Յերբ պտուտակը հոգանում ե, հեշտությամբ և պտուտակովում: Այդ լերկութը դուք բնչպիս եք բացատրում:

8. Ի՞նչո՞ւ ջրով լի թերմամանը տաքացնելիս ջուրը թափվում ե, թեև տաքանալուց թերմամանի ծավալը նույնպես մեծանում ե:

9. Պղնձալարի լերկարությունը  $0^{\circ}$  բարեխառնության մեջ  $100^{\circ}$  մեար ե: Վո՞րքան կերկարի ալի լարը  $20^{\circ}$  բարեխառնության մեջ:



Նկ. 21. Թերմոսկոպ.

### Սուրբ հարցեր I զիսի վերաբերյալ

1. Մարդին ինչի՞ համար և բնակարան շինում:

2. Կարո՞ղ ե արդյոք միաժամանակ միենույն սենյակը լերկութառ կանցից մեկին տաք թվալ, մկուսին՝ սառը: Բացատրեցեք:

3. Ի՞նչ բանի համար և գործածվում ջերմաչափը:

4. Զերմաչափն ի՞նչ կազմություն ունի:

5. Ի՞նչպես են զծում բաժանումները ջերմաչափի վրա:

6. Ի՞նչո՞ւ ջերմաչափ պատրաստելու համար կարելի յեւ սնդիկ դորձելը:

7. Ի՞նչ է կատարվում սնդիկի հետ տաքացնելու ժամանակ:

8. Ուրիշ հեղուկների հետ ի՞նչ է կատարվում տաքացնելու ժամանակ: Այդ ինչպես կարելի լի ապացուցել:

9. Ի՞նչ տարբերություն կա Ռեոմյուրի և Ցելսիուսի ջերմաչափերի միջև:

10. Զերմաչափեր են պատրաստված, բայց ցուցնակները դեռ գըծված չեն նրանց վրա: Կարելի յեւ արդյոք ասել, թե նրանցից ի՞նչ լերմաչափեր են շինվելու, Ռեոմյուրի, թե Ցելսիուսի:

11. Ռեոմյուրի ջերմաչափով սենյակի բարեխառնությունը  $16^{\circ}$  եւ Ըստ Ցելսիուսի դա վո՞ր բարեխառնությանն ե համապատասխանում:

12. Ինչպես և գծվում բարեխառնությունների գրաֆիկը:
13. Ի՞նչ կազմություն ունի բժշկական ջերմաչափը:
14. Ի՞նչ պետք է անել, վորպեսզի սնդիկը մտնի բժշկական ջերմաչափի գնդիկի մեջ:
15. Կարիք կմ արդյոք դիտելուց հետո թափ տալ լաբորատորիայի ջերմաչափը:
16. Ի՞նչո՞ւ համար անհրաժեշտ է բժշկական ջերմաչափը բավական յերկար ժամանակ պահել անոթում (թեև տակ):
17. Ողի հետ ի՞նչ և կատարվում տաքացնելիս:
18. Պինդ մարմնի հետ ի՞նչ և տեղի ունենում տաքացնելիս:
19. Թեի գդալը դտնվում եր սեղանի վրա: Հետո նրան իջեցրին տաք թեի մեջ: Պրալի չափը մեծացմաւ արդյոք:
20. Տաքանալիս ուելսների յերկարությունը կարո՞ղ է մեծանալ:
21. Որինակներ բերեք, վորտեղ տեխնիկայում հարկավոր և լինում հաշվի առնել մարմինների ընդարձակումը տաքանալուց:
22. Ի՞նչ բան և տեխնիկան:
23. Բաժանումներն ինչպես են գծվում բժշկական ջերմաչափի վրա:
24. Վոր այնտեղ վոչ  $0^{\circ}$  կա, վոչ  $100^{\circ}$ :
25.  $0^{\circ}$ -ից սկալաս բարեխառնություն կարո՞ղ է լինել:
26.  $100^{\circ}$ -ից բարձր բարեխառնություն կարո՞ղ է լինել: Որինակներ:
27. Ի՞նչ բան և թերմոսկոպը, ի՞նչ կազմություն ունի նա:
28. Ինչի՞ն են ասում «կծկում» մետաղե առարկաներ ձուլելիս:

ԲՆԱԿԵԼԻ ՅԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱ.Ք ՄՆԱԼՈՒ  
ՖԻԶԻԿԱԿԱՆ ՃԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Բնակելի և արտադրական շենքում պետք է պահպանվի վորոշ բարեխառնություն, մոտ  $14 - 20^{\circ} \text{C}$ :  $14^{\circ}$ -ից ցած բարեխառնության գեպքում ցուրտ է, իսկ  $20^{\circ}$ -ից բարձր բարեխառնության գեպքում արգելն շատ շող: Է, թե մեկը և թե մյուսը նաև առողջության համար:

Վորպեսզի ձմեռը բնակելի տունը տաք լինի, նախ պետք է միջոցներ ձեռք առնել վոր յեղած տաքությունը հազորդի դրսի սառն ողին, և յերկորդ, հոգալ այն մասին, վոր բնակարանի ներսում ատեղդվի բնակության համար անհրաժեշտ բարեխառնությունը:

Տարության պահպանումը հնարավոր է լինում շենքի կառուցման համար նյութի համապատասխան ընտրությամբ և այդ նյութի նպատակահարմար գործածությամբ, իսկ շենքի ներսում անհրաժեշտ բարեխառնությունն ստեղծելու համար սարքում են ջեռուցման այս կամ այն սիստեմը:

Ցեթե գուրք ծանոթանաք այն յեղանակներին, վորով տարածվում է ջերմությունը, ապա ձեղ համար հասկանալի կլինի, թե ինչպես են ընտրվում այն նյութերը, վորոնցից կառուցվում են շենքերը, հասկանալի կլինեն նաև նրանց կառուցման հիմունքները:

Ծանոթանանք ջերմության տարածման դանագան յեղանակների հետ:

ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉՊԵ՞Ս Ե ՏԱՐԱՆՎԱՐՈՒՄ ԶԱՆԶԱՆ

ՄԱՐՄԻՆԵՐԻ ՄԵՋ

Ցերք գուրք թելի գդալն իջեցնում եք տաք թելով բաժակի մեջ, ապա շատ շուտով գդալի կոթը նույնպես տաքանում է: Թելի մեջ իջեցված ծալիքը ջերմությունը գդալի միջով անցնում է նրա կոթին, մի մասնիկից արվելով մյուսին:

Զերմության մի մասնիկից մյուսին անցնելու այս յեղանակը, յերբ այդ մասնիկներն իրենք չեն շարժվում, կոչվում ե զերմանադրդություն:

Թեղի մեջ իջեցնելով մի փայտի կտոր դուք կնկատեք, վոր նա այս-  
պես չի տաքանում, ինչպես մետաղի գդալը։ Դրանից անհրաժեշտ է  
ցեղակացնել, վոր տարբեր մարմինների ջրմահաղորդությունը տարբեր ե-  
զորոշ մարմիններ ջերմությունը լավ են հաղորդում, վորոշ մարմին-  
ներ ել վատ։ Կատարելով № 6 լարորատոր աշխատանքը՝ դուք կկա-  
րողանաք վորոշել, թե վար մարմիններն են ջերմությունը լավ հաղոր-  
դում և վորոնք վատ։


#### ԱՐՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ № 6.

Աշխատանիր նպատակը. նետազուել զանազան մարմինների ջե-  
մահաղորդությունը։

Այս աշխատանքը բաժանում ենք յերեք մասի, առաջին մասում դի-  
տելու լենք մարմինների ջերմահաղորդությունը, յերկրորդ մա-  
սում հետազոտելու լենք ջրի ջերմահաղորդությունը և յերրորդ մասում  
ծանոթանալու լենք ողի ջերմահաղորդությանը։

ա) Ինչպես ե տարածվում ջերմությունը՝ զանազան  
պինդ մարմինների մեջ

ԳՈՐԾԻՔՆԵՐ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐ. պղնձալարի մի կտոր մոտ 20 սմ յերկարությամ-  
իջ կաթալարի նույնպիսի կտոր, ապակյա ձող, այրոց, պարաֆին կտմ մամ, յերկա-  
րձանոթ, խցանավոր շտափիվ (նկ. 22):



Նկ. 22. Վերաբերում և № 6  
աշխատանքին։

1. Յերկաթե և պղնձե լարերն առ-  
քացրեք շտափիվի խցանին այնպիս,  
վոր նրանց աղատ ծալրերը հանդիպեն  
իրար (ահս նկ. 22):

2. Մոմով մանրագնդակներ կպցրեք  
մետաղալարերին՝ նրանց աղատ ծալ-  
րեց 5 սմ, 8 սմ, 11 սմ և 14 սմ հե-  
ռավորության վրա։

3. Ալրոցը վառեցեք և մետաղալա-  
րերի միացված ծալրերը մացրեք նրա-  
բոցի մեջ։


4. Դիտեցեք, միաժամանակ են ցած-  
թափվում մանրագնդակները մետաղա-  
լարերի վրայից, վար մետաղալարի մի-  
ւով և ավելի արագ հաղորդվում ջերմությունը։

5) Մետաղալարերը հանեցեք խցանից և նրանց փոխարեն հորիզո-  
նական դիրքով ամբացրեք ապակյա ձողը, 5 և 8 սմ հեռավորության  
վրա մոմով մանրագնդակներ կպցրեք ձողին։

6. Աղակյա ձողի աղատ ծալրը տաքացնելով հետեւցեք, թե ինչ-  
պիս և տաքածվում ջերմությունն ապակյա ձողի յերկարությամբ։  
Ապակին լմզ և հաղորդում ջերմությունը,  
ուշադրությունը դարձրեք. ապակյա ձողի ծալրն սկսում և հալվել,  
բայց մանրագնդակները չեն թափվում նրա վրայից, վորովհետև ձողի  
բարեխառնությունն այն տեղերում, վորտեղ կպցրած են մանրագնդ-

ներ և ջաւրը լավ է նադարդում ջերմությունը

7. Մի կողմ դիմք շտափիվը և փորձանոթի մեջ սառը ջուր լցրեք.  
8. Փորձանոթը բոցի վրա բռնելով այնպիս, ինչպես ցուց և տրված  
23-րդ նկարում, նրա վերին ծալրը տաքացրեք ալրոցի վրա, վորոշ  
ժամանակից հետո ջուրը փորձանոթում լեռաւ ե,



Նկ. 23. Ջուրը լմզ և հաղորդում  
ջերմությունը։



Նկ. 24. Ջուրը լմզ և հաղորդում  
ջերմությունը։

Ջուրը առքացնել փորձանոթի այս մասում, վօրից դուք բռնտե-  
լիքք։

Ջուրը լմզ և հաղորդում ջերմությունը։

զ) Որն ինչպես ե նազորդում ջերմությունը

9. Փորձանոթը հաղցրեք մատի վրա և, բռնելով այնպիս, վոր նրա-  
նատակն ուղղված լինի դեպի վեր, տաքացրեք (նկ. 24):

Ձեր մատն զգմում և ողի տաքանալը փորձանոթում։

Ոչը ջերմության լմզ հաղորդիչ եւ։

Յեթե փորձանոթը շուրջ առաջներ ցածից, ապա ձեր մա-  
տը առքաւթյունն կզգա։

Պ) Զանագտն օինարարական Այսութերի ջերմա-  
նաղորդության փորձարկումը

10. Մալրից բռնեցեք մետաղալարի մի փոքրիկ կտոր, իսկ նրա լեբե-  
քորդ ծալրը դրեք սպիրտալորցի բացի մեջ:

Մետաղալարի տաքացող ծայրից ջերմությունն անցնում է այն  
ծալրը, վոր դուք բռնել եք ձեր ձեռքում:

Վորոշ ժամանակից հետո մետաղալարի ծալրն այնքան և տաքա-  
նում, վոր դժվար են նրան պահել ձեռքում,

11. Ձեր ձեռքում դունվող ծայրը փաթոթեցեք թղթի միքանի ջեր-  
տով և դուք իվմակի կլինեք մետաղալարը պահել կրակի մեջ:

Մետաղը ջերմության լավ հաղորդիչ է:  
Թուղթը ջերմության լավ հաղորդիչ է:

12. Յերկտակ ծալեցեք մետաղալարի կտորը և նրա մի ծայրին խցան  
հազցրեք: Մի ձեռքով բռնելով մետաղալարի մերկ ծալրը, իսկ մուս  
ձեռքով՝ մետաղալարին հազցված խցանը, մետաղալարի ծալը տաքաց-  
րեք կրակի մեջ:

Վոր ձեռքն ավելի շուտ տաքություն կղզաւ:  
Խցանը լավ են հաղորդում ջերմությունը:

13. Նույն ձեռք, ինչ ձեռվ դուք փորձում ելիք թղթի և խցանի ջեր-  
մահաղորդությունը, փորձեցեք փայտի, ստվարաթղթի, բամբակե և  
բրդե գործվածքների, թաղիքի և վուշի ջերմահաղորդությունը:

14. Բոցի մեջ տաքացրեք կավից պատրաստված և լավ չորացված  
ձողի ծալրն այն ձեռվ, ինչ ձեռվ տաքացնում ելինք մետաղալարը:  
Կավը լավ են հաղորդում ջերմությունը:

15. Աղլուսե բարակ թիթեղի ծալրը տաքացնելով բոցի վրա՝ փոր-  
ձեցեք աղլուսի ջերմահաղորդությունը:

16. Շուռ տվեք ձեզ արդեն ծանոթ թերմոսկոպի մետաղե տուփին  
ալնալու, վոր նա հորիզոնական դիրք ընդունի, և, մի փոքր բաժակ  
լցնելով լեռացող ջրով, դրեք թերմոսկոպի տուփի վրա:

Թերմոսկոպի հեղուկը բարձրանում է դեպի վեր. այդ ցուցը և տա-  
լիս ողի տաքանալը տուփի մեջ:

17. Բաժակը ցած առեք տուփի վրայից և սպասելով այնքան, վոր  
թերմոսկոպի հեղուկը վերադառնա իր նախկին դիրքին, թերմոսկոպի  
տուփի վրա դրեք չոր հողով լցված թիթեղիա անոթ և հողի վրա նա-  
րից դրեք լեռացող ջրով բաժակը:

Հեղուկը բարձրանում է թերմոսկոպի մեջ:  
Չոր հողը ջերմությունը լավ են հաղորդում:

## Յեգրակացություն կատարած աջաւաններ

Բոլոր մարմինները կարելի յե բաժանել յերկուսի՝ ջերմության լավ  
հաղորդիչներ յեկ վաս հաղորդիչներ: Լավ հաղորդիչների բվին են  
պատկանում մետաղները, վաս հաղորդիչների բվին՝ ապակին յեկ  
փայտը: Նաև վաս են հաղորդում ջերմությունը նեղուկներն ու գա-  
գերը:

## ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՋԵՐՄՈՒԹՅՈՒԹՅՈՒՆԸ

Բոլոր մետաղները պատկանում են լավ հաղորդիչների թվին, թեև  
առբիբեր մետաղների ջերմահաղորդությունը տարբեր եւ: Մետաղներից  
ամենալավ ջերմահաղորդն արծաթն եւ, այնունեաւ պղինձը, ալումի-  
նիումը, լերկաթը և այլն:

Փայտը, աղլուսը, քարերը, կամ ու ապակին ջերմության վատ հա-  
զորդի չներ են: Առանձնապես վատ ջերմահաղորդ ե ողը, վորի հետևան-  
քով վ որոշ մարմիններ, վորոնց ծակոտիների մեջ մեծ քանակությամբ  
ող և պարունակվում, ջերմության վատ հաղորդիչ են հանդիսանում և  
դործ են ածվում այնուեղ, վորտեղ առանձնապես պահանջվում ե կամ  
տաքությունից պաշտպանվել կամ տաքությունը պահպանել: Ալդախի  
նյութ երի թվին են պատկանում — աղբեստը, ստվարաթուղթը, ջուրը,  
բամբակը, բուրդը, թաղիքը, փայտի սղոցուքը, չոր հաղը, խցանը,  
վաւշը և այլն:

## Հարցեր

1. Ի՞նչ հշանակություն ունեն ձեռվալա ընթացքում դրվող կրկնակի  
քջանակները:

2. Ի՞նչու թերի հաստ բաժակները տաք ջրից ճաքում են, իսկ բա-  
ժակ քիմիական բաժակների մեջ կարելի յե ջուրը լեռացնել:

3. Ի՞նչու ինքնայենի վրա փայտե բռնակներ են շինում:

4. Ի՞նչու խոր և վիսրուն ձյունը պաշտպանում ե աշնանացանը  
ցրտահարությունից:

5. Ի՞նչն ե պատճառը, վար ջերմությունը վատ են հաղորդում ծղո-  
ւը, խոտը, չոր տերեները:

6. Ի՞նչու յերկաթե յերկար տկիշի (կրակ խառնիչի) համար փայտե  
բռնակ չեն շինում, չնայած նրա այն ծալրը, վոր վառարանումն և  
գտնվում շիկանալու չափ տաքանում եւ:

7. Ի՞նչու մետաղլա իրերը ցուրտ ժամանակ ավելի սառն են թվում,  
քան փայտե իրերը:

8. Ասում են, վոր սմուշատկը տաքացնում եւ. ճիշտ ե այդ արագ-  
հալացությունը:

9. Բամբակե վրա վերմակն և ավելի տաք նորը, թէ հինը, գործած վածը. ինչն:

10. Եինությունների վրա ինչն լիս ձեղնահարկ շինում:

11. Ինչպիսի կոտորի առակ և ձմբանն ավելի տաք լինում, ծղում թէ լերկաթե: Ինչն:

12. Մեղ մոտ ձմեռող թռչուններն ինչպես և՛ պաշտպանվում ցըսից:

### Կ Ո Ն Վ Ե Կ Ց Ի Ա.



Ձեր աշխատանքների մեջ դուք այն լեզրակացության լեկաք, վար հեղուկներն ու գաղերը ջերմության շատ վատ հաղորդիչ են: Մյուս կողմից առորյա զիտողությունները ցուց են տալիս, վոր հեղուկները վոչ միայն կարելի են տաքացնել, այլև լեռացնել: Բավական և ջրով թեյամանը դնել վառվող պրիմուսի վրա, և միքանի բոպե հետո մենք կունենանք լեռացող ջուր: Սրանից հետեւում ե, վոր հեղուկները ջերմահաղորդության միջոցով չեն տաքանում, այլ ուրիշ լեզանակով: Զերմահաղորդության միջոցով ջուրը տաքացնելու փորձեր կատարելիա, դուք փորձանոթը վերևից ելիք տաքացնում, իսկ սովորաբար թեյամաններն ու կաթսանները տաքացնում են ներքեց: Պարզելու համար,

թէ ինչ ե տեղի ունենում ջրի հետ, յեր նրան տաքացնում ենք ներքեցից, կատարեցիք հետեւ փորձը:

Փորձ 1.— Կոր հատակով կուրեմեջ ջուր լցրեք և նրա մեջ միքիչ փայտի սղոցուք (թեփ) խառնեցք (նկ. 25): Թույլ տալով, վոր ջուրը հանդարտվի, կուրն աժրացրեք շտատիվի վրա և սկսեցք տաքացնել ներքեցից, ինչպես ցուց ե տրված նկատեմ: Շատ շուտով դուք կնկատեք, վոր ջրի մեջ կախված սղոցուքներն սկսում են շարժվել: Տաքացած մասից նրանք բարձրանում են դեպի վեր, իսկ նրանց տեղը լիս են ուրիշ սղոցուքներ հեղուկի մեջ:

Նկ. 25. Կոնվեկցիոն հոսանքներ հեղուկի մեջ:

մը ցուց ե տալիս, վոր նրա մեջ՝ հոսանքներ են առաջացել:



Նկ. 26. Ֆառանը շարժվում ե շարժվող ոզի ողջեցության առկա:



Հեղուկի տաքացած մասնիկները բարձրանում են դեպի վեր, իսկ սար տերեւր զալիս են ցած: Զի այդ ըջապտույթը շարունակվում է այնտեղ ժամանակի, մինչեւ հեղուկի բարեխառնությունը բարձրանում հավասարվաւ է:

Տվյալ փորձի մեջ դիտված տաքացման լեզանակը բոլորովին նման չէ ջերմահաղորդության: Զերմահաղորդության դեպքում տաքացած մասնիկները տեղից չելին տաժվում, այլ տաքացնում ելին հարեվան մասնիկները: Տվյալ փորձում շարժվում են իրենք՝ տաքացած մասնիկները:

Փորձ 2.— Վառեցեք մոմը: Կողքից ձեռքը մուեցնելով մոմին դուք տաքություն չեք զգում, փորպիսի հանգամանքն ապացուցում է օգի վաս ջերմահաղորդ լինելը: Բայց բավական և մատը բռնել մոմի վրա, և դուք տաքություն կզգաք, իսկ յեթե ձեռքը շատ ցած բռնեք, կարող եք նույնիսկ այրվել: Բոցի վրա բռնված ֆռանն սկսում ե պտրավել, վորն և ապացուցում է տաք ոզի շարժումը (նկ. 26): Յերբ լարորատոր աշխատանքի մեջ փորձանոթը դուք բռնում ելիք հատակը դեպի ներքեւ, հատակի վեր տաքացնալով ողջ բարձրանում եր գեղի վեր և ձեր մատը տաքանում եր:

Փորձ 3.— Սահնման ապակյա խողովակը լցված և ծխով և փակ-


ված մի առիշ նույնատեսակ խողովակով: Այդ խողու նկ. 27. զոնվեկցիոն վակի մի ծունկը տաքացնելով դուք կնկատեք նույնըներ սպամ: Հոսանքները, ինչ վոր դիտում ելիք ջրի մեջ: Տաք ոզը վեր և բարձրանում է սպամ, իսկ նրա տեղը կալիս և սառն:

Փորձ 4.— Սփսելին ամբացրեք մոմի մի կտոր և ափսելի մեջ միքիչ ջուր ածեցեք: Մոմը վառեցեք և հետեւցեք, թէ ինչպիսի բոց ե տաքացման, յերբ մոմը զնում եք լամպի ապակու մեջ: Վորքան ավելի իշեցնելով լամպի շիշը, բոցն այնքան ավելի ծղվում ե և պայծառանում: Դա հետեւ մասնաւության առաջնական համար ապակու մեջ, բարը և սպամը նույնական է (նկ. 28): Ապակու տակից շարունակ թարմ ող և մոռենում

բային, ալրվելու համար՝ անհրաժեշտ թթվածինը մտառկարարելով՝ նրանք  
Ապակու ծալրն իջեցնելով ջրի մեջ դուք դադարեցնում եք սգի հոսանքը  
գեղի բոցը և մոմը հանզջում են:

Կատարված փորձերից՝ անհրաժեշտա  
ն յեղբակացնել, վոր տաքացնելիս գո-  
ղերի մեջ նույնպես առաջանում են  
տաք և սառն մասնիկների հոսանքներ,  
փորոնք նպասառում են գազերի տա-  
քացմանը:


Չերմուրյան տարածումն նեղու-  
ի կամ գազի հոսանքների, միջո-  
ցով կոչվում ե կոնվեկցիա:



Նկ. 28. Ողի բարչն ապակու մեջ  
ուժեղացնում ե մոմի այրումը:

### ԶԲԻ ԸՆԴՄՐՉԱԿՄԱՆ ԱՌԱՆՉԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կաբորատոր աշխատանքների ժամանակ դուք տեսաք, վոր Հեղումի  
ները տաքանալիս ընդարձակվում  
են, սառչելիս սեղմվում: Դուք  
տեսաք նույնպես, վոր հեղումի  
ներքելից տաքացնելիս նրա մեջ  
կոնվեկցիոն հոսանքներ են առա-  
ջանում, և այդ ժամանակ տաք  
մասնիկները վեր են բարձրա-  
նում, իսկ նրանց տեղը գալիս  
են սառն մասնիկները: Ճիշտ  
նույնպիսի յերևութներ տեղի ին  
ունենում ենք ջրի մեջ, յերբ դուք  
փորձը կատարում եք 4°C-ից  
բարձր բարեխառնություն ունե-  
ցող ջրի հետ: Մինչև 4°C սառ-  
ցնելիս՝ ջրի ծավալը շարունակ  
փոքրանում ե և ամենափոքր  
ծավալը ջուրն ունենում ե 4°C  
բարեխառնության ժամանակ:



Նկ. 29. Ջրի ապրեր շերտերում դրված  
շերմաշտիկները՝ ապրեր բարեխառնու-  
թյուն են ցույց տալիս:

Ֆեթե տինուհետև շարունակենք ավելի ևս սառեցնել, առաջ ջուրն  
ալիս չի սեղմվի, այլ, ընդհակառակը, կսկսի դարձյալ ընդարձակվել և  
քարձրանալ գեղի վեր: Այդ բանում փորձով համոզվելու համար, խցա-  
նով պինդ փակեցեք լամպի ապակին, նրա մեջ ջուր լցրեք և ապա-  
կին իջեցրեք ձյունախառն ջուր պարունակող մի ապակե անոթի մեջ,  
կամպի ապակու մեջ լցէկու ջերմաչափ մտցրեք. մեկի գնդիկն իջեցրեք  
մինչև ապակու հատակում գտնվող խցանը, իսկ մլուսի գնդիկը պահե-  
ցեք ապակու վերին մասում (նկ. 29): Հետևելով ջրի բարեխառնու-  
թյանը, նրա և ստորին և վերին շերտերում դուք կնկատեք, վոր լեր-  
կու շերտերումն ել բարեխառնությունն ընկնում ե, և ստորին խա-  
վում բարեխառնությունն ալիւ ցած ե, քան վերին խավում: Այդպես  
շարունակվում ե, մինչև վոր թե վերին և թե ստորին խավերում բա-  
րեխառնությունը 4°C-ի և հաջասարվում: Այնուհետև վերին ջերմաչափի  
բարեխառնությունը կսկսի ընկնել, իսկ ստորին ջերմաչափինը միառ-  
ժամանակ կմնա 4°C, մինչև վոր ամբողջ ջրի բարեխառնությունն ալդ  
տատիճանից ցած իջնի: Այս յերևութը հսկայական նշանակություն  
ունի բնության մեջ: Յերբ վրա լեն հասնում աշնան ցրտերը, ջրի վե-  
րին շերտերը սառչում են և իջնում ներքեւ: Այդ դեպքում նաև շարունակվում ե  
այնքան ժամանակ, քանի դեռ վերին շերտերը մինչև 4°C չեն սառ-  
չել: Այն ժամանակ վերին շերտերն ալիս ցած չեն իջնում, ալլ  
շարունակելով սառչել, կազմում են սառցի հասաւ ծածկոց, վորի տակ  
ջուրը մնում ե 4°C բարեխառնությամբ: Դրա հետևանքով ջրամբարը չի  
սառչում մինչև հատակը և նրա մեջ կյանքը կարող ե շարունակվել:


### ՇԵՆՔԵՐԻ ՏԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊՈՆՈՒՄԸ

Մանոթանալով ջերմահաղորդության զանազան յեղանակների հետ,  
այժմ աեսնենք, թե մեր ուսումնական յերևութներն ինչպես են օգ-  
ագործվում շենքեր կառուցելիս:

Բնակելի և արտադրական շենքերի պատերը կառուցում են փայ-  
տից, աղյուսից, քարից կամ բետոնից: Այս բոլոր նյութերի ջերմա-  
հատությունը շատ փոքր ե, և պահանջված հաստությունն ունենա-  
լու դեպքում, նրանք կարող են պաշտպանել, վոր դրսի ողը շենքը  
չխռում է: Հատակն ու առաստաղը սովորաբար փայտից են շինում,  
իսկ տաքությունն ալիւ լավ պահպանելու նպատակով հատակի և  
գետնի, առաստաղի և կտուրի միջև ողի համար աղտոտ տարածու-  
թյուններ են թողնում (նկ. 30): Ողը ջերմության վատ հաղորդիչ  
մնելով ցրտից պաշտպանում ե շենքը թե ներքելից և թե վե-  
րկից: Ողը գտնվելով պատուհանների կրկնակի ըրջանակների միջև,  
թույլ չի տալիս, վոր շենքը ցրտի համեմատաբար բարակ ապակիների

միջով։ Փայտայա տների պատերը խնամքով կալնում են խծուծով, վարպեսդի ճեղքեր չմնան։ Դրսի գուները պատռում են թաղիքով և մոմլաթով, վորովհեան զժվար և գուներն աբնութեա հարմարագրել, վար նրանք կատարելապես կիպ փակվեն։ Վերևից առաստաղի վրա չոր ծողի բավական հաստ շերտ են դարսում, վորը փակում և բոլոր ճեղքերը, վորոնք կարող ելին մնալ առաստաղը շինուին, և հնարավորություն չի առաջին, վոր տաք ոդն անցնի ճեղնահարկը։

Շատ հաճախ կարելի յե տեսնել, թե ինչպես փայտայա տների պատերին բարակ տախտակներ են փակցնում, նրանց և գերանների միջն




Նկ. 30. 1—Հիմք, 2—տան վանդակը, 3—հատակ, 4—ծածկ, բարակ գերանների ից, 5—ծածկ բարակ գերաններից, 6—ճեղնահարկ 7—ծպեղ, 8—սվաղ, 9—բարակ տախտակի հանդերձանք, 10—սպանցույց ընդհատակյա մասերն ողափոխելու համար։

Հիմքի մեջ, վորի վրա կառուցված ե շենքը, որանցուցյներ են շենում, ընդհատակյա մասերը ողափոխելու և խոնավությունից պահպանելու համար։ Զմեռն այդ ողանցուցյները փակում են փայտե խուփերով և ծեփում կավով։ Դյուղերում հաճախ խրճիթների ստորին մասերը ծածկում են ծղուուկ և վրան ձյուն լցնում։ Տաքությունը պահպանելու այս ճերին դիմում են միայն այն գեղքերում, յերբ խրճիթների պատերն ու հիմքը շատ խարխուկ են և մեծ թվով ճեղքեր ունեն։

Նոր խրճիթում լավ խծուծված պատերը, ամուր հատակը և խրճիթը շուրջը կիած հողաթմբերը աղատում են շենքը տաքության կորուստից բանջարեղենները ձմեռը պահելու համար տեղափորում են չոր և ձութ նկուղներում կամ բորբովին չոր հողում փորված փոսերում (նկ. 31), բարձր տեղերի վրա, վորտեղ գետնի ջրերը շատ մեծ խորությունից են հոսում։ Փոսի հատակին շինում են փայտե վրաքաշ և փայտե ծղուուկ և նրա վրա դարսում են բանջարեղենները՝ լավ չորացված վիճակում։ Վրաքաշի տակից գետի վեր գուրս և բերված ողափովակը Խողովակի ամբողջ լերկարությամբ ծակեր են քացված։ Վերեկից ուր փոսերը խնամքով ցրտից պաշտպանում են ծղուուկ, փախաթով (խսիր), չոր տերևներով, ճյուղերով և հողով։

Մեծ անտեսություններում բանջարեղենները պահելու համար սարքում են մեծ գետնափոր նկուղներ։ Այդպիսի պահեստների կողքի պատերից մեջ դուռ և շինված, վորտեղից կարելի յե պահեստը մտնել և, բանջարեղենների միջն աղատ թողնված արահետից՝ տնցնել պահեստի ցանկացած մասը։ Այսպիսով հնարավորություն և սաեղծված




Նկ. 31. Բանջարեղենները պահելու փոս

հատելու բանջարեղենի վիճակին և հեռացնելու վհացած բանջարեղենը ընդունելու դրվում են հողե հատակից վորոշ բարձրություն ու բանջարեղենները դրվում են հողե համար, ինչպիս բանջարեղենների փոսերում, շինված են քարշակողովակներ, վորոնք իրենց մեջ ծայրավ մտնում են փայտե վրաքաշի տակը։

Գրաքերում մառանները փորում են գետնի մեջ, իսկ վերեկից վրաքաշը են շինուած, վորի մեջ դռնակով մի մտոց կա փոսի մեջ իջնելու քաշ են շինուած, վորի մեջ դռնակով մի մտոց կա փոսի մեջ իջնելու ամար։ Վրաքաշի վրալից տանիք են շինուած կամ նույնիսկ փոքր համար։

շենքեր կառուցում: Ծղոտե կամ փայտե տաճիքը, շինության մեջ գտնվող ողբ և վրաքաշը, մանավանդ յիթե վրաքաշի վրայից ծղոտ և գորսված, մառանը շատ լավ պաշտպանում են սառչելուց: Այդպիսի մառանն ամռան իր ներսում զով և պահում, իսկ սառցով և ձլունով



Նկ. 32. Գետնափոր տուն:

ցնելու գեղագում, մինչև անդամ ամենաշող լեզանակներին ալնտեղ տուցով կարելի լե կաթ և ուրիշ մթերքներ պահել:

### ԳԵՏՆԱՓՈՐ ՏՈՒՆ


Պատերազմի ժամանակ միշտ հնարավոր չե պահանջված քանակությամբ պատրաստի բնակարաններ ճարել զորքի համար: Ամառվա ընթացքում զինվորներն ապրում են վրաններում, իսկ ձմեռը հարկավոր և լինում ավելի տաք բնակարաններ պատրաստել: Այդպիսի ձմեռաբնենքերի մի տեսակ են գետնափոր տները:

Գետնափոր տունը շինվում է 50 կամ 25 մարդու համար և զանազան տեսակի կառուցվածք և ունենում: 32—33 նկարների վրա պատկերացված են յերեք տարբեր տեսակի գետնատներ: Դուք տեսնում եք, վոր գետնատան համար վորպես պատ ծառալում և հողը: Հողի մեջ փորված 4-ից 6 մետր լայնությամբ և 15-ից 18 մետր լերկարությամբ խրամատի վրա շինված և միալանջ կամ լերկանջ կտորը: Կտորի վրաքաշը պատրաստվում ե գերանից, ճյուղերից, ծղոտից կամ բարակ տախտակներից, վորոնց վրա լցնում են հաստ շերտով հող:

Լայնական պատերը շինվում են փայտից կամ ճիմից, ալյուսից, ցանկապատի ձևով հրուսված ճյուղերից, վորոնց վրա հետո զբսից հող են ածում:

Պատուհանները՝ կրկնակի շրջանակներով, շինվում են լայնական պատերի վրա, և առակի չունենալու գեղքում լերկու կողմից փակցը վում են յուղոտ թղթով: Գետնատունը մտնելու համար լայնական պատերից մեկի մոտ առտիճաններ են փորում (նկ. 33Ճ) և նախասենյակ են շինվում լերկու դրուկով՝ արտաքին և ներքին: Գետնատան ներսում


վառարան են շինվում աղյուսից, լերկաթից, կամ ուղղակի գմանի մեջ վառարատն են պատրաստում (նկ. 33Ճ): Ծուխը տարվում ե գեղի դուրս հաղի մեջ շինված խողովակով: Գետնատան ողափոխությունը (տեղի մեջ առնենում վառելու ընթացքում:



Նկ. 33Ճ. Գետնատան: Ռեզաղբություն դարձրեք վառարանի վրա:

### ԶԵՌՈՒՅՑՈՒՄ

Վարքան ել լավ կառուցված լինի շենքը, նա տաք չի լինի, յեթե նրա մեջ չեռուցում չկա: Ինչպես վոր մուշտակի գերն և մարմինը տարքության կորուստից պահպանելը, ճիշտ այդպես ել շենքը՝ միայն ծառալում:



Նկ. 33Յ. Գետնատան:

առլում ե նրա մեջ զանված տաքությունը պահելու համար: Նայած շենքի կառուցվածքին և նրա մեջ ապրողների պահանջկոտության, շենքի ջեռուցման ձեւերը բազմատեսակ են լինում: Կարծեք, հիշելով շենքի ջեռուցման ձեւերը բազմանակները, ինքը մարդն ապաստարան եր վույնում քարայրներում և տաքանալու համար քարայրի հատտկին խառնում գարայրներում և տաքանալու համար քարայրի հատտկին խառնում գարայրներում, վորոնց մեջ մարքովկ եր վառում, ալժմ ել շենքի են կառուցվում, վորոնց մեջ մարքովկ եր վառում, ալժմ ել շենքի են կառուցվում, կամ վառելանյութն արգիկ հատակի վրա խարուցկներ են վառում, կամ վառելանյութն արգիկ հատակի վրա լայնական պատերի մոտ առտիճաններ են փորում (նկ. 33Ճ) և նախասենյակ են շինվում լերկի վրա լերկի են թողնում: Այս միանգամայն անկատար կարտանի կտորի վրա լերկի են թողնում:

Գեռուցումը, իհարկե, իր վերջին որերն և ապրում, և կտբելի էն հու-  
ալ, վոր ամենակարճ ժամանակամիջոցում, հետամնաց ժողովուրդների  
կուլտուրական մակարդակի բարձրացման հետ կապված՝ ջեռուցման այս  
ձեռն ավանդության գիրկը կանցնի. Ջեռուցման այս լեզանակից շատ  
հեռու չեն բուխտարին. սա իրենից ներկայացնում են մի խարույկատեղ,




Նկ. 34. Ցերկաթե վա-  
ռաբան:

աելանյութը: Այդ ոճախի ներքում ողամուտ կա, վորտեղից մտնում  
և վառելիքի ալրման համար անհրաժեշտ ողը: Ծուխը դուրս և աար-  
քում ուղիղ կամ վոլորապտուկտ խողովակի միջոցով: Այդ ծխատար  
խողովակը նպաստում են ալրման, վորովհետև բարձ և ստեղծում, վա-  
րով հեռացվում են վառարանից ալրման հետևանքով գորացած ածխա-  
թթու գաղը: Խողովակի մեջ քարշն առաջանում են այն պատճա-  
ռով, վոր ալրման ժամանակ վառարանում գորացող տաք ողը, ինչ-  
պես մենք տեսանք փորձերի ժամանակ, ձգտում են դեպի վերև իր  
հետ տանում են ալրման արտադրանքները: Այդ ողի փոխարեն ողա-  
մուտի միջով մտնում են վառարանի մեջ դրսի ողը, փայտերին բե-  
րելով ալրման համար անհրաժեշտ թթվածինը: Սենյակում գտնվող  
ողը, վառարանը վառելու ժամանակ, մտնում են վառարանի մեջ, իսկ  
նրա փոխարեն դրսից՝ փայտի և աղբուսի ծակոտիների միջով ներս և  
գալիս թարմ ողը: Բնակարանն ողափոխվում են, և ալր ողափոխման  
ողներու համար, շատ ողտակար են վառարանը վառելիս բանալ պա-  
տռանաների ողանցքները: Դա հեշտացնում են ողի մուտքը՝ սենյակի  
մեջ և ողնում են, վոր սենյակի ողն արագ կերպով նորոգվի: Այսպիսի  
նախնական ձեռվ վառարան շինելը խնայողական չեն բոլորովին, քանի  
վոր վառարանի գագերը շատ տաք են և, կարծ խողովակի միջով հե-  
ռանալով, իրենց հետ մեծ քանակությամբ տաքություն են դուրս

աանում: Վորպեսպի հեռացող գագերի վերմությունն ոգտագործվի հենց  
վառարանը տաքացնելու համար, շինում են այսպես կոչված հոլան-  
դական վառարաններ, վորոնց մեջ վառարանի գագերը դուրս գալուց  
առաջ պետք են շատ վոլորապտուկ ճանապարհ անցնեն վառարանի  
պատերի ցերկայնքով:

Նկ. ՅԵ-ի վրա ներկայացված են  
հոլանդական վառարանի ներքին մա-  
սերը, վորի համար հարկավոր են լե-  
զել հեռացնել կողքի պատերի մի մա-  
սը: Այդ նկարի վրա սլաքներով ցուց  
ետքած այն ցերկար ճանապարհը  
վոր պետք են անցնեն ալրման արտա-  
դրանքները վառարանի մեջ: Դուք  
տեսնում եք, վոր ծուխը կրակարանից  
հախ մտնում են առաջին անցքի մեջ՝  
բարձրանալով դեպի վեր, վերևում ծու-  
խը մտնում են ցերկարորդ անցքը, վորի  
միջով իջնելով՝ ընկնում են ցերկարորդ  
անցքի մեջ և այլն, մինչեւ համառում են  
ժիանին (ծխատար խողովակին): Վա-  
ռարանի գողերն ալդ ճանապարհը  
հարելով առաջնում են վառարանի  
պատերը և, իրենց տաքության մեծ  
մասն ալդ պատերին տալով, դուրս են  
դնում բավականաչափ հովացած: Ծխա-  
տար խողովակի մուտքը վառարանի կողմից կարելի լին փակել ծած-  
կիչներով, արգական են անում են, լեռը վառարանը վառվել և արդին ու-  
վառարանների մեջ ծխատար խողովակի կողքին անցք են շինում սե-  
նյակի ասպականված ողը դուրս տանելու համար: Այդպիսի անցք պատ-  
առ կերպացված են ՅԵ-ի նկարի վրա: Ողտափոխության համար կարելի լին  
ողովակի նաև այն գոնակով, վորով ողտափոխ են ծածկիչը փակելուն:  
Տաքացած ծխատար խողովակը լավ կկատարի ողտափոխիչ անցքի վե-  
րը: Վառարանի վառվելը դիտելով դուք այնտեղ կապույտ կրակներ  
կտեսնեք: Դա ածխածինութիւնն են վառվում, — սաստիկ թաւնովոր մի  
շագ: Քանի վառարանի մեջ կան ալդ կապույտ կրակները, ծխատար  
ոնցը փակել չի կարելի, վորովհետև զեր լիովին չարգված ածխածի-  
նութիւնը չի կարողանա հեռանալ ծխատար խողովակի միջով, այլ վա-  
ռարանից դուրս կդա սենյակի մեջ, կառաջացնի թաւնավորում (շմուր,  
ուզար), վոր հաճախ վերջանում են մահով: Ծխանցքը փակելուց հետո  
վառարանի մեջ մնացած կրակը առաջնում են ամբողջ վառարանը.



Նկ. ՅԵ. Հոլանդական վառ-  
արանի կարգածք:

Հորպեսզի այդ տաքությունը հնարավորության չտփ շատ լինի, պետք է հետևել, վոր փակտերը միաժամանակ վառվեն և վառարանում առանձին չայրված խանձողներ չմնան:

### Ի՞նչպես ՊԵՏՔ ԵՎ ՎԱՐԵԼ ՎԱՐԱՐԱՆԸ

1. Վառարանը վառելու համար պետք է պատրաստել չոր փայտ, բայց հնարավորության նույն տեսակի, վորովհետեւ տարբեր տեսակի փակտերն անհավասարաչափ են վառվում, մի տեսակը մյուսներից շուտ է վառվում:

2. Խանձողներն ստացվում են վոստաշատ փայտից, հետեւարար առանձին խանձողներից խուսափելու համար պետք է ընտրել հավասար մեծության վոստեր ունեցող փակտեր:

3. Հավասարաչափ կլասվեն հավասար մեծության փայտերը, այդ պատճառով պետք է փայտն ըստ հնարավորության միատեսակ ջարդեր:

4. Վառելուց առաջ մոխրից պետք է մաքրել ողամուտը և կրակարանը<sup>\*)</sup> և ստուգել քարշը<sup>\*\*</sup>):

5. Կրակարանի մեջ պետք է այնքան փայտ դարսել, վոր այլև կարիք չլինի նոր կտորներ ավելացնելու:

6. Մինչև վառարանի վառվելը, պահանջվում է ողի փոքր հոսանք, վորը տրվում է վառարանի դռնակի միջով:

7. Յերբ փայտը վառվում է, պետք է բանալ դռնակն ու ողամուտը, թույլ չտալով, սակայն, վոր աղմկալի մեծ քարշ ստեղծվի: Պետք է կանոնավորել քարշը և հետևել, վոր փայտը հավասարաչափ վառվի:

8. Յերբ փայտն ալրվում վերջանում է, պետք է փակել դռնակը և քարշը կանոնավորել միայն ողամուտով:


### ՈՒՍՏԱԿԱՆ ՎԱՐԱՐԱՆ

Ուստական վառարանը ծառակում է վոչ միայն սենյակ տաքացնելու, այլև կերակուր պատրաստելու համար: Վառարանի այս բարդ պաշտօնն ավելի ևս բարդանում է նրանով, վոր ամառ ժամանակ այդ վառարանը պետք է ծառայի միայն կերակուր պատրաստելու: Թե այս խնդիրն ինչպես է լուծվում վառարան շինողի կողմից, այդ կարելի չե տեսնել նկարից (նկ. 36): Վառարանի առջևի մասը կոչվում է առաջք, հետևելի խափանիչով ծածկված մասը կրակարանն է, կրակարանի ներքեւ մասը կոչվում է տակ, վերևինը՝ կամար: Կրակարանի խափանիչով փակված մուտքը կոչվում է բերան: Յեթե հաց թխել է պետք, կամ ձմեռը՝ վառարանը

<sup>\*)</sup> Կրակարան կոչվում է վառարանի այն մասը, վորտեղ վառվում է փայտը:

<sup>\*\*)</sup>  Յեթե քարշ չկա, պետք է փակել ծածկիչները, նրանց վրա լրադրի թուղթ կամ ուրիշ դրա բարձրացնել և այդ նյութը վառելով, տաքացնել ծխատար խովանից, մինչև վոր քարշ առաջանա:

վառել, փայտը դարձում են կրակարանի մեջ և վառարանը վառարանից հետանում ե բերանի վերևից և մըտնում և ծխատար խողովակի մեջ: Յերբ փայտն ալրվում վերջանում է, վառարանը ծածկում են խափանիչով, վառարանում մնացած տաքությունը սաստիկ տաքացնում է վառարանը, Այդպես վառելը լավ է ձմեռը: Ամառը կերակուր պատրաստելու համար կարելի լի վառել վոչ թե վառարանը, այլ առաջքում գտնվող պլիտան: Այս ձևով վառելիս, վառարանն ինքը սահն և մնում, և քիչ փայտ է ծախսվում:




Նկ. 36. Ուստական վառարան:

### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԶԵՌՈՒՑՈՒՄ

Մեծ շնչում հոլանդական վառարաններով ջեռուցումը խնայողական չե: Հարկավոր կինի բազմաթիվ վառարաններ վառել, վորի համար պահանջվում է մեծ քանակությամբ վառելիք և շատ մարդիկ են զբաղվում վառարանների մոտ փայտ բերելով և նրանց վառելու վրա հսկելով: Ահա թե ինչու մեծ շնչերում կիրառվում է վոչ թե «տեղական ջեռուցում», այլ՝ «կենտրոնական»: Բնակելի շենքերում, վորտեղ պահանջվում է տաքությունը միորինակ պահել, սովորաբար կառուցում են այսպես կոչված կենտրոնական ջրային ջեռուցում: Այն շենքերում, վորտեղ միորինակ տաքությունը պարտադիր չե, այլ պահանջվում է շենքն արագ կերպով տաքացնել, կառուցվում է կենտրոնական ջոկակիչնուցում: Ջեռուցման այս լեղանակները կենտրոնական են կոչվում նրա համար, վոր վառելիքի այրումը տեղի չե ունենում մի «կենտրոնում» (տեղում) — ամբողջ շենքի համար:

Ջրային ջեռուցումը հետեւալ կառուցվածքն ունի: Սովորաբար շենքի գետնահարկում դրված ե լինում մի փակ կաթսա, վորի մեջ, այս կամ այն լեղանակով ջուր է տաքացվում: Կաթսայի վերին մասից մի ուղղ խողովակի բարձրացնում է ծեղնահարկը, վորտեղ գրված և ըլնդար-


ձակման ջրամբարը, Ջրամբարից ձեղնահարկով անցնում ե մի հորիզոնական խողովակ և այդ խողովակից, շենքի սենյակների միջով, ցած մեն իշնում մի շարք ուղղաձիգ խողովակներ: Ներքենում այդ բոլոր խողովակները մտնաւմ են մի յերկրորդ հորիզոնական խողովակի մեջ վորն իր




Նկ. 37. Ջրային ջեռուցման ուրվագիծը:

փոխարեն, բոլոր խողովակներից կաթսայի մեջ լցվում ե սառը ջուրը՝ և երբ կաթսան շարունակում ե տաքանալ, կաթսայից դեպի ընդարձակման ջրամբարը բարձրանում ե արդեն բավականաշափ տաք ջուր, իսկ նրա փոխարեն խողովակներից կաթսայի մեջ գարման մի և համեմատաբար սառը ջուրը Ջեռուցման խողովակների մեջ լցված գործելով՝ տաք ջուրը տաքացնում ե ուղիթատորները, նրանց աալով իր ջերմության մի մասը, և, միքիչ հովանալով նրանց մեջ, թափիվուն և կաթսայի մեջ, վորպեսզի այնտեղ տաքանալով՝ նորից բարձրանալ ջրամբարը: Ուղիթատորների մոտ ծորակներ են դրված, վորոնց սգնությամբ կարելի յե կանգնեցնել ջրի հոսանքը դեպի ուղիթատորը և այդպիսով դադարեցնել սենյակներից վորեն մեկի տաքացումը, յեթե այն աել ցանկացածից ավելի յե տաքացել: Հաճախ ափային, ուղիթատորների փոխարեն զրվում են լայն խողովակներ, վորոնց վրա ձուլված են մի շարք չուղունե սալիկներ: Հարց ե առաջ գալիս, թե ի՞նչ նշանակություն ունեն այդ տուփերն ու սալիկները: Գուցե բավական կլիներ դնել միաւն խողովակները: Այս հարցին նույնպես հարցով կարեմի յե պատասխանել: Վեր սենյակն և ափելի տաք. այն սենյակը, վորի վառարանն ավելի մեծ մակերեսությունում, թե ընդհակառակը՝ միշտ

այդպես ել ջրային ջեռուցման մեջ ուղիթատորների ձեւ և խողովակի վրա ձուլված սալիկները շատ են մեծացնում տաքացման մակերեսը և դրանով պահանջված չափով տաքացնում են սենյակը: Կենարունական ջեռուցումը շատ հարմար ե. այստեղ չկան այն կեղտն ու անամքրությունը, վորոնք կապված են հոլլանդական վառարանները վառելու հետ, շմուշի վտանգ չկա, ամբողջ տունը տաքացնում է հատկապես նշանակված մի մարդ միայն, սենյակների բարեխառնությունը կարելի յե կանոնավորել, փակելով ուղիթատորների ծուրակները: Այս ձեփի ջեռուցման հետ չկա միայն ողափոխում, վորի հետևանքով հարկ ե լինում ողափոխման հատուկ սիստեմ կառուցել, կենարունական ջեռուցմանը տաքացվելիք տունը, դեռ նրա պատերը կառուցելու ժամանակ, ապահովում ե հատուկ անցքերով, վորոնց ոգնությամբ սենյակներին թարմ ող և մատակարարվում և հեռացվում և տպականված ողը: Մեծ շենքերում, թարմ ողի հայթայթումը և ապա-



Նկ. 38. Կենարունական ջեռուցման ուղիթատորը:



Նկ. 39. Կալորիֆեր: Կալորիֆերի միջով անցնելիս, արտաքին սառն ողը տաքանում ե և մտնում է սենյակ արդեն տաքացած:

կանվածողի հեռացումը կատարվում է հատուկ մեքենաների միջոցով:

Այս ձեր ողափոխման ժամանակ թարմ ողն անցնելով տաք խողովակների (կալորիֆերների) շարքերի միջով տաքանում ե (նկ. 39):

Այս ամենը, ինչ զոր դուք այստեղ կարդացիք կենտրոնական ջեռուցման մասին, ավելի հետաքրքիր կլինի, յեթե եքսկուրսիա կատարեք գեղի կենտրոնական ջեռուցման կաթսայարանը և տեսնեք այնտեղ, թե ինչ կազմություն ունի կաթսան, վառելիքն ինչպես և մատուցվում այդ կաթսային, թող ձեզ ցույց տան այն խողովակը, զորով բարձրանում ե տաք ջուրը, և այն խողովակը, զորով թափվում ե բանեցված ջուրը: Եքսկուրսիայի ժամանակ գծագրեր արեք:

ՀԱՐՈՒՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՆԻ Ն 7.

Աշխատանի նպատակը. պիտել ջերմուրյան անջատվելը, յերք գուրշին ջրի յե փոխվում:

ԳՈՐԾԻՔՆԵՐ ՑԵՎ ՆՅՈՒԹԵՐ. Ցերկու քիմիական բաժակ, մոտ 300 սմ<sup>3</sup> առաղությամբ, մենզուր, ջերմաչափ, սպիրտայրոց, թուղթ—մի յերեսը սասնձով ծածկված, խոր աման (քարղան):

Գործիքներ՝ ի մը ի ընդհանուր գործածության համար. յեստը շոգետար խողովակով և պրիմուս:

Ուժադրուրյուն. Դուք այս աշխատանիում գործ պիտի ումենամ գուրու հետ, վորի այրվածները սաստիկ ցալ են պատճառում: Աշխատանի ժամանակ հարկավոր ե շատ զգույշ լինել: Հատուկ ուժադրուրյուն պետք է դարձնել, վոր ոգետար խողովակը ծովոծ լինի: Ծոված կամ սեղմված խողովակի միջով զոլորշին չի կարող անցնել, յեւ կարող ե այնպիս պատճանել, վոր զոլորշին, յել չգտնելով, պայրեցնի կարսան կամ դարս տարտի խցանը: Թե մեկ յեւ թե մյուս դեպքում կարող են լիրավորութենել կամ վտանգավոր այրվածներ առաջանալ: Զգույշ յեվ ուժադրի լինելու դեպքում սվյալ աշխատանի վտանգավոր չե:

1. Քիմիական բաժակի մեջ լցրեք 220 սմ<sup>3</sup> ջուր և թուղթ փակցնելով՝ նշեցեք լցված ջրի մակարդակը:

2. Բաժակից հետ ածեցեք 20 սմ<sup>3</sup> ջուր: Չափեցեք և զրի տաքը աղյուսակում բաժակի մեջ մնացած ջրի բարեխառնությունը:

3. Այդ ջրի մեջ գոլորշի բաց թողեք այնքան ժամանակ, մինչև վոր բաժակի ջրի մակարդակը համար համարյա նախկին բարձրության, վորը նշված ե թղթով:

4. Գրեցեք աղյուսակում ձեր ստացած բարեխառնությունը, ջրի մեջ գոլորշի բաց թողնելուց հետո:

Քանի վոր բաժակի մեջ ջուրը համարյա հասել ե նախկին բարձրության, ապա միանգամայն ակներե ե, վոր ավելորդ ջուրն ստացվե ե գոլորշոց, վորը ջրի յե փոխվել:

Սառը ջուրը, վոր լցված եր բաժակի մեջ, տաքացել ե: Վերտեղից վարող եր առաջանալ այդ ջերմությունը, վոր տաքացրել ե այդ ջուրը:

5. Բաժակը՝ ստացված տաքը ջրով դրեք սառը ջրով քարդանի մեջ, վարպեսպի ջուրը սառչի:

6. Ցերը ջուրը սառչի, մենզուրով չափեցեք, թե ինչ քանակությամբ գոլորշի յե փոխվել ջրի, և այդ թիվը գրեցեք աղյուսակում:

#### Աղյուսակ

##### Առաջին փորձ

##### Ցերկան փորձ

Սառը ջուր	200 սմ <sup>3</sup>	Սառը ջուր	200 սմ <sup>3</sup>
Բարեխառնությունը փորձի սկզբում . . . . .	—	Բարեխառնությունը փորձի սկզբում . . . . .	—
Բարեխառնությունը դուրս բաց թողնելուց հետո . . . . .	—	Բարեխառնությունը յեռացող ջրի հետ խանելուց հետո . . . . .	—
Վորքն գոլորշի յե բաց թողնված . . . . .	—	Վորքն յեռացող ջուր և լցված . . . . .	—
Գոլորշու բարեխառնությունը . . . . .	100°	Ցերացող ջրի բարեխառնությունը . . . . .	100° *)

7. Բաժակի մեջ դարձալ 20 սմ<sup>3</sup> ջուր լցրեք, չափեցեք նրա բարեխառնությունը և գրեցեք աղյուսակում: (Լավ կլիներ, յեթե սառը ջրի բարեխառնությունը փորձի սկզբում այնքան լիներ, վորքն առաջին փորձի ժամանակ):

8. Մյուս բաժակի մեջ այնքան ջուր չափեցեք, վորքն առաջին փորձի ժամանակ գոլորշի յեր ստացվել և սպիրտայրոցի վրա այդ ջուրը տաքացրեք մինչև յեռացման աստիճանը (100 ° C):

9. Ցերը ջուրը կակսի յեռալ, ածեցեք սառը ջրով բաժակի մեջ և վորչեցեք խառնուրդի բարեխառնությունը, ջերմաչափով լավ խառնելով խառնուրդը:

Խառնուրդի բարեխառնությունը գրեցեք աղյուսակում:

10. Համեմատելով աղյուսակի առանձին տողերում գրված թվերը, դուք տեսնում եք, վոր չորս տողերի թվերը, թե մեկ և թե մյուս փորձի մեջ, մոտավորապես հավասար են: Ջրի վերջին բարեխառնությունը, գոլորշին բաց թողնելիս, զդալի չափով ավելի բարձր ե, քան այս:

\*) Ինչպես վերկռւմ հեղատակված ե, ջրի և գոլորշի բարեխառնությունը յեռանակ Ցերկանում հավասար ե 96°-ի:

Ջրի բարեկառնությունը, վորի մեջ գոլորշու փոխարեն, նույն քանակությամբ յեռացած ջուր և բաց թողնված:

Այն լեզրակացությունը, վոր պետք ե հանել այս փորձից, հետեւ վյալն ե.


Եերբ գոլորշին ջրի յե փոխվում, մեծ հաճակուրյամբ ջերմուրքուն ե անջատվում:

Գոլորշին զգալի չափով ավելի ջերմուրյուն ե անջատում, բուն նույն հաճակուրյամբ յեռացող ջուրը:

Այն ջերմուրյունը, վորն անջատվում է, յերբ գոլորշին ջրի յե փոխվում, կարելի յե ոգտագործել զանազան նախակերի նամակ:

### ՇԱԳԵՑԵՌՈՒՑՈՒՄ

Կոլրի մեջ կիսով չափ ջուր ածեցեք և փակեցեք մի խցանով, վորի միջով անց և կացված ապակյա խողովակ (նկ. 40). Կոլրի ջուրը տա-




Նկ. 40. Գոլորշին անցնում ե խողովակի միջով  
և տաքացնում ե նրան:

Քացրեք և, ձեռքով շոշափելով ապակյա խողովակը, իմացեք, թե՝ ինդուստ յերը կակսի տաքանալ:

Քանի դեռ կոլրի ջուրը չի լեռաւմ, խողովակը սառն ե մնում: Հենց վոր կոլրի ջուրն սկսի յեռալ և գոլորշին անցնի խողովակի միջով, դուք կնկատեք, թե ինչպես ուժեղ տաքանում ե խողովակը: Գոլորշու այս հատկությունը, տաքացնելու այն խողովակները, վորոնց միջակ նա անցնում ե, ոգտագործվում ե շոգեջեռուցման մեջ (նկ. 41):

Շենքի գետնահարկում դրված ե մի կաթսա, վորի մեջ գոլորշի լետացվում: Այդ գոլորշին ուղղաձիգ ուղիղ խողովակով բարձրանում ե վերին հարկը, վորտեղից բաշխվում ե շեռուցման խողովակների մեջ: Գոլորշին, անցնելով խողովակներից, սառչում ե և նորից դառնում ե ջուր, վորը խողովակների միջով թափվում ե գետնահարկում գտնվող մի հատուկ անոթի մեջ, վորտեղից ըստ պահանջի այդ ջուրը կարելի յե մղել կաթսայի մեջ: Ծոգեջեռուցման համար գործնական ածվում նույն ռադիատորները, ինչ վոր ջրալին նառուցման համար:



Նկ. 41. Շոգեջեռուցման ուղղագիծը:

Ծոգեջեռուցման միջոցով շատ արագ կերպով կարելի յե տաքացնել շենքը, բայց այդ տաքությունը յերկար չի պահպանվում: Հենց վոր այլքա գոլորշի չի ուղարկվում շեռուցման խողովակների մեջ, նրանք շատ շուտով հովանում են: Ընդհակառակը, գոլորշի բաց թողնելու ժամանակ դժվար ե կանոնավորել շենքի բարեխառնությունը: Ցեթե գործարանում աղաւա գոլորշու ավելցուկ կա, ապա շատ ավելի հարմար և այդ գոլորշին ոգտագործել այսպես կոչված շոգեջրալին շեռուցման համար, վորի ժամանակ կենտրոնական ջրալին շեռուցման համար ջուրը տաքացնում են այն գոլորշու միջոցով, վոր ստացվում ե գործարանի ընդհանուր կաթսայաբանից:


### ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱԹՍԱՅԻ ՈՒՐՎԱԳԻԾԸ

Գործարաններում վառելանյութը ծախսվում ե թե մեքենաների աշխատանքի վրա, և թե գործարանի շենքերի տաքացման վրա: Գործարանի համար պահանջվող մեծաքանակ ջերմությունն ստանալու համար

անհրաժեշտ և շատ՝ վառելանյութ վառել. միաժամանակ վառելանյութը պետք և խնայողաբար վառել, վորակաղի ըստ հնարավորության ոգտագործվի ամբողջ այն տաքությունը, վոր կարելի է ստանալ նրանից:

Նկ. 41-ում կտրվածքով պատկերացված և կաթսաչտկան տեղականքը:

Զախ կողմում դուք տեսնում եք Կ կաթսան, վորը տաքացվում և Տ հնոցի մեջ վառվող վառելանյութով: Հնոցը տեղավորված և կաթսաչի մեջ, կիզախողովակում, ինչպես հրախողովակն ինքնայենի մեջ, Տաք գաղերն անցնելով կիզախողովակի միջով և Ը ծիւանցքներով, վորոնք շրջապատում են կաթսան, իրենց տաքության մեծ մասը տաքությունը շրջապատում են կաթսան, իրենց տաքության մեծ մասը տաքությունը կաթսաչին և անցնում են ծխնելուզը, վորտեղից ընկնում են բարձր ծխանի մեջ:



Նկ. 42. Գործարանի կաթսայաբանի ուրվագիծը:

Կ — կաթսան, Տ — հնոցը, Ենոցի տակ գանգում և ողամուտը.

Ծ — ծխանցքները, Բ — ծխնելուզը:

Հնոցից կրակն անցնում և կիզախողովակի միջով:

Վառելանյութը լցվում և հնոցի մեջ հնոցի բերանից, վորը փակվում և դռնակով, յերբ հնոցը վառվում և Հնոցից Ներքև ղետեղված և մոխրակով, լինայինք հնոցը վառվում և հնոցում զոյացած մոխրը և վորտեղից բանում և հնոցի մեջ այրման համար անհրաժեշտ աղը:

Հնոցն ու մոխրանոցը միմյանցից բաժանված են և բարականդակով, չուզունից պատրաստված մի վանդակով, վորը կազմված և իրարից վորոց հեռավորության վրա գտնվող ձողերից:

Այն բացվածքը, վորի միջով մոխրանոցից հեռացվում և մոխրը և մաքուր ող և ներմուծվում, կոչվում և ողամուտի դուռը բանալով կամ փակելով հնոցապանը հնարավորություն ունի կանոնավորելու դրսի ողի մուտքը:

Դուք տեսաք, թե մոմ ինչպես պայծառ եր վառվում, յերբ նրա վրա լամպի ապակի ելինք հազցնում, և այդ յերկույթը բացատրում ելիք նրանով, վոր ապակին քարշ և առաջացնում:

Ճիշտ ալգիկ ել գործարանի բարձր ծխանը վառելանյութի այրման ժամանակ քարշ և առաջ բերում, այսինքն՝ հարկադրում և, վոր ողամուտով թարմ ողը գնա դեպի այրվող վառելանյութը և ալրման արգունքները հեռանան ծխանով:

Ծխնելուբզը փակվում և խափանիչով, վորի ոգնությամբ հնոցապանը կարող և կանոնավորել քարշը, մեծացնելով կամ փոքրացնելով անցքը գաղերի համար:

Վորպեսզի կաթսայարանի ողի հետ շփելով, կաթսան չնովանա և իզուր տեղը չտաքացնի կաթսայարանի ողը, կաթսան ծածկված և աղուսի պատվածքով:

Այն կաթսան, վորին դուք ծանոթացաք կաթսայական տեղակարանքի այս ուրվագծով, կարելի յե տեսնել կենտրոնական ջեռուցման կաթսայարանում, կենտրոնական ջեռուցման ծխանն անցնում և շենքի ներսից և վերջանում և կտուրից շատ բարձր:

## ԶԵՐՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱՆԱՑԻՆ ՍԻՍՏԵՄ

Ժամանակակից տեխնիկան չի սահմանափակվում միայն առանձին շինությունների կենտրոնական ջեռուցմամբ, ալև հաջող փորձեր և կատարում միաժամանակ տաքացնելու մի շարք շենքեր, մի ջեռուցման սարքով սպասարկելով մեծ քաղաքի ամբողջ թաղամասեր:

Այս սիստեմի մեջ ջուրն առանձին շինություններին տրվում և արդեն վոչ թե կրնվեկցիայի ոգնությամբ, վոր բավական դանդաղ և կատարվում, ալև հատուկ ջրհաններով, վորոնք տաք ջուրը շարժում են բավական մեծ հեռավորությունների վրա: Այս սիստեմը գործադրելիս շատ հեշտ և կանոնավորել տաքացվող շենքերի բարեխառնությունը հենց կաթսայարանից, վորտեղից այդ նպատակով կարելի յե ջուրը բաց թողնել ալս կամ այն բարեխառնությամբ և այս կամ այն արագությամբ:

Խորհրդային Միության մեջ առաջին ալգիսի տեղիայանքը գտնվում և կենինգրադում, վորտեղ մի ամբողջ քաղաքաշրջան տաքացվում և այն ջերմությամբ, վոր տալիս և Յ-րդ պետական ելեկտրոկախանը: Այդ տաքացվունն առաջներում իզուր եր կորչում: Ալգիսի մասն:

յերկրորդ տեղակայանք կառուցվելու յե Մոսկվայում՝ կիտայ-քաղաքի, Կրեմլի, Ժողովագերխորհի և Արհմիությունների Համամիութենական կենտրոնական Խորհրդի մեծ շենքերը տաքացնելու համար։ Այդ ջեռուցման համար անհրաժեշտ տաքությունը տալու յե առաջին ելեկտրոլայանը, վոր Տինչէ այժմ տաք ջրի ավելցուկները թափում եր Մոսկվա գետը։

### Հարցեր

1. Վար հարկերում ուղիատորներն ավելի տաք են, վերբն, թև ստորին։ Ինչո՞ւ։

2. Զբային ջեռուցման ժամանակ ընդարձակման ջրամբարներ ինչի՞ն շինում։ Չի կարելի արդյոք բավականանալ առանց այդպիսի ջրամբարների, ջուրն ուղղակի խողովակների մեջ բաց թողնելով։

3. Շենքում ողափոխման համար յերկու անցք կա՝ վերեւում և ներքնում։ Այդ անցքերից վոր մեկով և թարմ ոգ ներս գալիս և զորով և հետանում ապականված ողը։

4. Մտածեցեք, թե փորձով ինչպես կարելի յե ապացուցել, վոր ազյուտի մեջ ծակոտիներ կան։ Փորձը կատարելու համար թարմ ազյուտ վերցրեք։

5. Ասում են, վոր վառելիս պատուհանների ողանցքներ բանալը սառեցնում ե սենյակը։ Ապացուցեք, վոր սենյակը տաքանում ե վո՞ւ թե վառելիս, այլ վառելուց հետո։

### ՇԵՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Շենքի համար ամենալավ լուսավորությունը հանդիսանում ե ցերեկվա բնական լույսը, արևի լույսը, վորի պատճառով ժամանակակից շենքերում լուսամուտները, վորքան հնարավոր ե, մեծ են շինում։ Ցերեկոյան հարկավոր ե լինում արհեստական լուսավորության դիմելու։ Ամենավաղեմի ժամանակներում խարույկը մարդուն իր քարանձավում տալիս եր և տաքություն, և լույս, վորի ոգնությամբ նա կարող եր շարունակել աշխատանքն իր քարայրում նաև արեգակի մայր մտնելուց հետո։ Խարույկի լույսը մի վստահելի պաշտպանություն եր նաև վայրենի գաղանների հարձակումներից։ Հավանական ե, վոր հենց այդ խարույկն ոգնեց լուսավորության համար հատուկ գործիքներ հնարելուն։ Մարդը կարող եր նկատել, վոր խեժոտ ճյուղերը խարույկի մեջ ընկնելով պայծառ լույս են տալիս, վորի տակ կարելի յե աշխատել, առանց ամբողջ խարույկը վառելու։ Այսպես յերեւան յեկավ «մորթիը»։ Մարդը բավական պայծառ լույս ե պալիս, բայց նրանից ոգտվելու յեղանակը շատ անհարմար ե։ Հարկավոր ե լինում փոխել մի մարդը

մյուսի նետելից, մարիս ծուլս ե արձակում, վոր վասակար աղջեցություն ունի վոչ միայն անսովոր մարդու, այլև այն մարդկանց վրա, իորոնք այդպիսի լուսավորության մեջ են մեծացել։ Այս ձեմի լուսավորության համար անհրաժեշտ ե տանն ունենալ լավ չորացված մարիս բավական մեծ պաշար։ Կարող ե պատահել, վոր պատահաբար յուղոտված մարիս, վորն ավելի պայծառ և յերկար ժամանակ և վառվում, քան ուղարկան մարիս, մարդու մեջ միտք և հղացրել մոմ և հետո նաև լամպ չի նելու։ Հավանական ե, վոր լամպի գյուտը հետևանք ե յեղել այն գիտողության, վոր ճարպով հագեցած թելերի փունջը պայծառ և յերկար ե վառվում։ Գեղարվեստորեն կերտված, բայց իր կազմությամբ նախնական, հռոմեական լուղի ճրագը պատկերացված ե նկ. 43-ում։ Այդ անգլիական չուպ եյին լցնում և նրա մեջ իջնցնում եյին կլոր պատրուցը։ Այդ ձեմի լամպը բավական յերկար և պայծառ եր վառվում, բայց ծխում եր ճիշտ այնպես, ինչպես մարիսը։ Լամպի կա-




Նկ. 43. Հին հռոմեական ճրագ։

Նկ. 44. Կերասինի լամպի պատրուցակալը։


ամբելագործումն սկսվում ե 1780-ական՝ թվականներից, յերբ նրան հարմարեցնում են զլանաձեւ ապակի և հատուկ ձեմի պատրուցակալ։ Մենք չենք ուսումնասիրի, թե պատմականորեն ինչպես և զարգացել ժամանակակից՝ կերասինի լամպը, այլ կը նենքն նրա ալժմված կառուցվածքը։

Լամպի վառվող պատրուցը ներկայացնում ե մի փոքրիկ ոճախ, այդ պատճառով այն որենքները, վորոնց լենթարկվում ե բոցը, նույնը պետք ե լինեն, ինչ վոր մենք տեսանք հնոցի մեջ։ Բոցը պետք ե ոգի վորոց հոսանք ստանա, առանց վորի լրիվ այրում չի կարող լինել և լամպը կծխա։ Բոցի կանոնավորումը կատարվում ե պատրուցակալի և ապակու միջոցով։

Ամենապարզ պատրույդակալը պատկերացված է նկ. 44-ում: Այդ պատրույդակալի Մ տափակ պատրույգը վերև և ներքև ե շարժվում է բերկու փոքրիկ անիվերի ոգնությամբ, վորոնք շարժման մեջ են դրվում Յ կոճակով: Պատրույդակալն ինքը, վորի մեջ տեղավորված է սակ Յ կոճակը, բաղկացած է ծակոտիկն պատերով մետաղի գլանից: Պատրույդակալի վերևի մասում գտնվում է Ը խփիկը. վորը մի ճեղք ունի բոցի և, յեթե անհրաժեշտ է, սակ պատրույգի համար: Նորմալ կերպով վառվելիս, պատրույգի ծալը մի փոքր ցած և գտնվում է Ը խփիկի վերի լեզրից: Կերասինի գոլորշները խառնվելով ոդի հետ, վորը մտնում է պատրույդակալի ծակոտիներից, վառվում են պայծառ լուսով, յեթե բավարար քարշ կա: Այդ քարշն առաջացնում է համապատասխան ձեւ ունեցող ապակին:



Նկ. 45. «Սոլնիա» լամպը



Նկ. 46. Կերասինի յեփոց: Յեթե փայլարը չափած կամ լավ չի դրված, պատրույգները վատ են վառվում, և յեփոցը ծխում է:

Եստ պայծառ «Սոլնիա» լամպը, վորը ներկայացված է նկ. 45-ում, ունի մեծ գլանաձև պատրույգ, վոր մեծ բոց ե տալիս: Քանի վոր այդ պիսի բոցի համար ոդի մեծ հոսանք ե պահանջվում, ապա ստիպում պիսի բոցի հոսի վոր այդ ոդը հոսի վորը մեծ հոսանք է պահանջվում են ուղերձվուարի մեջ, այլև հնարավոր չեղուրս հանել, այդ պատճառով պատրույդակալների կոճակների վրա հատուկ սղմակներ կան, վորոնց ոգնությամբ կարելի յե կարգավորել կոճակի անվտանգ պտույտը:

Կերասինի լամպը լավ են վառվում, յեթե նրանց պատրույգակատը մաքուր ե պահվում և պատրույգը հավասար ե կարված: Պատրույդակալու կուտակված կեղալը արձակելով կերասինի չափաված

գոլորշիները, սենյակում անհամու հոտ ե տարածում: Մյուս մասերի համեմատությամբ պատրույգի ավելի շատ դուրս ցցված մասերն ավելի մեծ բոց են արձակում և զրանով կամ ծխում են, կամ թուլ չեն տալիս, վոր մյուս մասերը կանոնավոր այրվեն, վորի հետևանքով դարձյալ հոտ ե տուած գալիս:

Մի փոքր ել կերասինի յեփոցի մասին խոսենք, թեաբետ նա (նկար 46) լուսավորության համար չի ծառայում, այլ ծառայում ե կերասիուներ պատրաստելու համար: Նրա մեջ ևս, ինչպես և «Սոլնիա» լամպում մեջ, գլխավոր մասը հանդիսանում է մետաղի ուղերձվուարը, վորի միջից մի նեղ խողովակ ե անցնում, վորպեսզի ոդի հոսանք ստեղծվի գեպի բոցը: Մյուս պատրույդակալը յերկու տափակ պատրույգները ունի: Ոգաքարշն ստեղծվում է մի մետաղի խողովակի միջոցով, վորի վրա փայլարով ծածկված լուսամուտ կա, բոցին հետևելու համար: Յեփոցը վառվում է հանգստ և առանց հոտ արձակելու նույն պայմաններում, ինչ վոր լամպը, հատկապես, յերբ պատրույդակալը մաքուր է, պատրույգները կանոնավոր են կարված և այնքան բարձրացրած, վոր փայլարի միջով փոքր ազմուկով վառվող կապույտ բոց ե յերեցում: Անհրաժեշտ ե նշել, վոր այս յեփոցների հին սիստեմներում, յերբ պատրույգներն ընկնում են ուղերձվուարի մեջ, այլև հնարավոր չեղուրս հանել, այդ պատճառով պատրույդակալների կոճակների վրա հատուկ սղմակներ կան, վորոնց ոգնությամբ կարելի յե կարգավորել կոճակի անվտանգ պտույտը:

Ելեկտրական լուսավորությունը, վոր փոխարինել ե կերասինի լուսավորության, պիտի ուսումնասիրենք հետազա դասընթացքում:

Թափիլած վառվող նավքը ջրով չի հանգչում: Բոցի վրա ավագ ցանեցեմ կամ ծածկեցեմ բոցը բաց տրով: Յերե հարկավոր ե լինում յեփոցի վրա յերկար ժամանակ կերակուր պատրասել, պիտի նետեվիլ, վորպեսզի ոեզերվուարը տաս չսաբանա: Մայրահեղ դեպիում ոեզերվուարի վրա պիտի բաց տր փոել, չծածկելով խցանի նախապահպանի անցը:

## Ճ Ա Ռ Ա Գ Ա Յ Թ Ա Ւ

Մատենալով տաք վառարանին, դուք զգում եք, թե ինչպես նրանից տաքություն ե գալիս: Այս արտահայտությունը՝ «վառարանից տաքություն ե գալիս», ներկա դեպիում շատ պատկերավոր ձևով հատուգում ե դիտված յերկությը: Վառարանից ձեզ հասնող ջերմությունը ջերմահաղորդությամբ չի փոխանցվում, քանի վոր ձեր և վառարանից միջև գտնվող ողն անհամեմատ ավելի թաւլլ ե տաքանում, և

Դա հեշտությամբ կարելի է ապացուցել, դնելով ձեր և վառարանի միջև մի վորես ջերմարգել, թե կուզ մի թերթ թուղթ, Յերեսութն այս-աել կոնվեկցիայով ևս բացատրել չել կարելի, վորովհետև կոնվեկցիայի հետևանքով տաք հոսանքները վերև են բարձրանում: Բաց վառարա-նից տարածվող տաքությունն առանձնապես ուժեղ և զգացվում այն ժամանակ, յերբ նրա մեջ փայտ և վառվում: Բայց այս դեպքում ևս, բավական և մի արգելիչ գնել կառարանից յեկող ճառագալթների գեմ, վորպեսզի ջերմության զգայությունը կորչի: Այսպիսով պետք և յեղ-րակացնել, վոր

Վառարանից յեվ շիկացած ածուխներից տաքուրյունը տարածվում է դիպի մեզ նառագայրներով:

Այդ նառագայրները կարող են տեսանելի լինել, ինչպես պայծառ վառվող վառարանի դեպքում, կարող են նայել անետանելի լինել, փոքր դուք կարող եք նկատել մատենալով տաք վառարանին, ջրալին շեռացման ռադիատորներին յեվ նույնիսկ՝ ձեռքներդ մատենելով տաք թերով լցված բաժակին:

Ճառագայրների միջոցով ջերմուրյան տարածման յեղանակը կօչ-փում և նառագայրում:

Անհրաժեշտ է կատարել Հ 8 լաբորատոր աշխատանքը, վորը կտա-ձի շարք արժեքավոր գիտողություններ:

ԱՄՈՒՋՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ Հ 8.

Աշխատանիքի նպատակը. ծանոքանալ ջերմուրյան տարածման հետ՝ նառագայրման միջոցով:

ԴՈՐԾԻՔՆԵՐ ՑԵՎ ՆՅՈՒԹԵՐ. Կջ 27-ում նկարագրված թերմոսկոպը, սպիրո-ց, դողիչ և ողբիմուս՝ ողակների համար ընդհանուրը), թիթեղյա աման՝ տաք ջրէ համար, զօրի մեջ կողմը փայլուն, իսկ մյուսը՝ սկ փայլուա ներկով ծածկված:

1. Թերմոսկոպ պատրաստեցեք հետեւյալ ձեռվով. մի շերտ սկ թուղթ կարեցեք և այդ շերտը խողովակի ձեռվով վոլորելով դրեք փորձանոթի մեջ. Փորձանոթը փակեցեք սետինե խցանով, վորի մեջ մտցրեք խիստ նեղ անցք ունեցող մի ծուծ խողովակ (խողովակի անցքում մի կա-թիւ ջուր պետք և լինի):

2. Պատրաստած թերմոսկոպը խցանից ամրացրեք շտատիվի սեղ-մակի մեջ (21-րդ նկարում փորձանոթը սխալ և ամրացված շտատիվի վրա. Այդպես արված ե, վորպեսզի թերմոսկոպի կաղմությունն ավելի պարզ լիրեա):

3. Թողեք այդ սարքը միտոժամանակ հանգիստ մեա, վորից հետո

սետինե ողակի միջոցով նշեցեք խոզովակի վրա այն տեղը, վորանգ կանգնած ե հեղուկի կաթիւլը:

4. Թերմոսկոպից մոտ 15 սմ հեռավորության վրա դրեք վառվող սպիրոտայրոցը: Հեղուկի կաթիւլը կհեռանա ողակից:

Այդ բնու և ապացուցում:

5. Թերմոսկոպի և սպիրոտայրոցի միջև տետրակ դրեք: Հետեւցեք կաթիւլին:

6. Սպիրոտայրոցը հանգրեք և այնտեղ, վորտեղ նախապես սպիր-տայրոցն եր դրված, այժմ դրեք պրիմուսի վրա սաստիկ տաքացված դողիւը:

Կաթիւլն ինչպես ե շարժվում:

7. Թողեք, վոր թերմոսկոպը հովանա, վորի ընթացքում կաթիւլը նորից պետք և վերադառնա ուստինե խողովակի մոտ:

8. Թերմոսկոպին շատ մոտիկ պահեցեք ձեր ձեռքի ափը, առանց նրան գիպչելու:

Կաթիւլը շարժվում ե: (Ուշադրությամբ նայեցեք):

Կաթիւլը էս արդյոք ասել, վոր ներկա դեպքում ևս ձեռքից գնացող ճառագալթներն են տաքացնում թերմոսկոպը:

9. Թիթեղյա անոթի մեջ տաք ջուր ենք լցնում և անոթը գնում ենք թերմոսկոպից 10 սմ հեռավորության վրա, անոթի փայլուն չերեսը դարձնելով դեպի թերմոսկոպը: Հինգ րոպե սպասում ենք և սետինե յերկրորդ ողակով նշում կաթիւլի գտնված տեղը: Ամեն մի նոր փորձի ժամանակ թույլ տվեք, վոր — մինչև փորձն սկսելը — թերմոսկոպը հո-վանա: Կաթիւլը պետք և վերադառնա իր հին տեղը:

10. Թիթեղյա ամանի սկ յերեսն ենք դարձնում դեպի թերմոսկոպը և գիտում ենք, թե կաթիւլը 5 րոպեյի ընթացքում վհրանե կհասնի:

Վեր դեպքում թերմոսկոպն ավելի շատ տաքացավ:

Վեր մակերսն և ավելի շատ ջերմալին ճառագալթներ արձակում, փայլինը, թե սկը — փայլատը:

11. Թերմոսկոպի միջից հանեցեք սկ թուղթը և նրա տեղը դրեք արձաթագուլուն թուղթի:

12. Այս աշխատանքի 10-րդ կետը կրկնեցեք փայլուն թղթով թեր-մոսկոպի համար:

Վեր դեպքում և տաքացում ավելի ուժեղ, սկ թե փայլուն թղթի դեպքում:

Ա Յ Ա Տ Ա Բ Ֆ Ի Յ Ե Գ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Ր Յ Ո Ւ Բ Բ

Բոլոր մարմինները ջերմուրյուն են նառագայրում: Մարմինների փայլուն, բաց գույնի մակերեսները ավելի իր ջերմուրյուն են նա-ռագայրում, բան անփայլ, խավար մակերեսները:

Ճառագայթման հետ կապված հարցերը շատ են և դուք չեք կարող նրանց մշակել միայն լաբորատոր աշխատանքի ընթացքում, քանի վոր միայն լաբորատոր աշխատանքից ոգտվելով շատ լեռնութներ դուք չեք կարող դիմել: Ահա թե ինչու ձեզ մի շարք փորձեր կմատնանշենք, վոր պետք ե կատարեք, ոգտվելով առաջին հարմար առիթից:

Փորձ 1. Վառած վառարանից գեղի ձեղ տաքություն ե գալիս. Զեռքներդ ավելի մոտեցրեք վառարանին, նա ուժեղ տաքություն ե գործում: Բաց վառարանի և ձեր ձեռքի միջև թափանցիկ ապակի գրեք:

Ձեր ձեռքը դադարում ե տաքություն զգալուց:

### ՅԵՐԱԿԱԳՈՒՐԵՐԸ

Սպակին բափանցիկ ե ենսանելի ճառագայթների համար յեվ չի անցկացնում անտեսնելի ջերմային ճառագայթները:

Փորձ 2. Մի ջերմաչափի գնդիկը ներկեցեք սև լակով, լակի մեջ մուռ ավելացնելով: Ցերկորդ ջերմաչափի գնդիկը ներկեցեք սպիտակ փայտատ ներկով:

Ցերեք ջերմաչափ մեկը սև լակով ներկված, մյուսը սպիտակ ներկված և յերրորդը մաքուր, իրար կողքի կախեցեք այնպես, վոր նրանց վրա արևի ճառագայթներ ընկնեն:

Ջերմաչափերից վերն ե ավելի բարձր բարեխառնություն ցույց տալիս: Ջերմաչափերից վորի՞ գնդիկն ե ավելի շատ տաքացել արևի ճառագայթներից:

### ՅԵՐԱԿԱԳՈՒՐԵՐԸ

Սեվ մակերեսներն ավելի ըուս են տախանում, բան բաց գույնի մակերեսները, փայլա մակերեսներն ավելի, բան փայլուն մակերեսները:

Փորձ 3. Ցերկորդ փորձի ժամանակ վերցրած լերեք ջերմաչափերը տեղափորեցնեք 15 սմ հեռալորության վրա տառուցի մի մեծ կտորից, վոր այդ նողատակի համար սենյակ եք բերել:

Ջերմաչափերից վերն ե ավելի ցած բարեխառնություն ցույց տալիս: Տաքացած ջերմաչափերը գտնվելով սառուցի կտորի մոտ, ճառագայթում են իրենց ջերմությունը: Փորձը ցույց ե տալիս, վոր՝

այն մակերեվույթները, վորոնի ավելի ուժեղ կերպով են տաքուրյուն կլանում, ոժաված են ջերմուրյուն ճառագայթելու ավելի մեծ ընդունակությամբ:

Այս փարձերով կարող են բացարկվել շատ յերկույթներ, վորոնց մենք Հանդիպում ենք բնության մեջ:

### ԽԵՂՉԵ Ե ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ԶԵՐՄՈՑՈՒՄ

Դուք, ինարկե, գիտեք, վոր ջերմոցը շիթիներ և զաղահաս բանջացեղներ բուցնելու համար ե: Գետնի մեջ փոս ե փորված, վորի հատակում գտնվում ե աղբով լավ պատրաստված հող: Փոսի վրա բարձրանում են փայտե ցածլիկ պատեր, վորոնք ծածկված են ապակյա վշանակներով:

Արեկի ճառագայթներն անցնելով ապակու միջով, ջերմոցի հողին և նրա մեջ գտնվող բույսերին ավելի մեծ բարեխառնություն ե հաղորդում, քան ջերմոցի շրջապատում յեղած բարեխառնությունն ե: Ջերմոցի տաքացած պատերն ու հողը, ինչպես դուք տեսաք Յ-ըդ փորձում, իրենք ել են ջերմություն ճառագայթում, բայց տաքացած մարմինների արձակած այս ջերմային ճառագայթներն ապակին իր միջով չի անցկացնում: Այդպիսով դուքս ե գալիս, վոր ջերմոցի ներսի մասը շատ տաքություն կարող ե կանել, բայց ջերմություն դուրս տալ չի կարող, վորի հետևանքով ջերմոցը տաքանում ե:

### ԶԵՐՄՈՑՅԻՆ ՅԵՐԵՎԱՆԻՑՅՈՒՆԵՐԸ ԲՆՈՒԹՅՈՒՆ ՄԵՂ

Բնուրյան մեջ ջերմուրյան ամենազիստոր աղբյուրը հանդիսունում ե արեկիր:


Ջերմուրյան արեկիր յերկրին հաղորդվում ե բացառապես նառազարման միջոց վ, վարովիտ յերկրությունը անող տարածության մեջ վոչ ջերմահաղորդուրյուն յեվ վոչ ել կոնվեկցիա լինել չեն կարող:

Արդ մի նոռագայթները կլանվելով յերկրային առարկաների կողմանց մից, փոխարկվում են ջերմուրյան:

Հիրավի, ճառագայթներն անցնելով ողի միջով, վոր թափանցիկ կամ համարյա թափանցիկ ե ճառագայթների համար, չեն տաքացնում ողը: Զմեռվա պարզ և արևոտ որերին ողի բարեխառնությունը կարող ե շատ ցած լինել: ամառն ողի բարեխառնությունը շատ ավելի ցած ե, քան արևի լույսով պայծառ լուսավորված անթափանցիկ, մանավանդ մուղ առարկաների բարեխառնությունը: Եթեացած կտուրները, վողոցների առարկաները, արևի ճառագայթների տակ փափկող մայթերի ասֆալտն ամառը շատ անհաճո յեն դարձնում կլանքը քաղաքում:

Տաքացումը կախված է տաքացման տևողությունից և ճառագայթների մեծ կամ փոքր թեքությունից, ճառագայթների թեքությունը վորքան փոքր լինի, այնքան օտարիկ են նրանք տաքացնում: Ամառ

Ժամանակ ցերեկը, յերբ արևի ճառագայթները փոքր թեքությամբ են ընկնում զետնի վրա — շուտ եւ Յերեկոյան՝ արևն իջնում եւ դեպի հարիղոնը, ճառագայթները թեքում են, և դով եւ լինում: Զմնովա ընթացքում արևի ճառագայթները շատ թեք են ընկնում, արևը քիչ ժամանակ եւ մնում հորիզոնից բարձր, այդ պատճառով յերկրագնդի վրա ցուրտ ե: Բայց ահա, պայծառ, արեսու որ յեղավ: Արևի ճառագայթները փոքր թեքությամբ ընկնում են տանիքի հարավային լանջի վրա, վոր ձիունով ե ծածկված (Նկ. 47): Այդ ճառագայթների տակ ձյռնը



Նկ. 47. Տաքացում արևի ճառագայթներով:


Հարվիում եւ և սկսում ե կաթիլներով հոսել տանիքից: Բայց շուտով ճառագայթներն անհետանում են և տանիքից հոսող կաթիլները պազրուակներ (լուլաներ, սառցաշիթեր) են դառնում:

Ամառ ժամանակ ցերեկն արևի ճառագայթների պղեցության տակ զետինը սաստիկ տաքանում ե, բայց, ահա, հասնում ե գիշերը, և տաք գետինն իր ջերմությունը ճառագայթելով տարածության մեջ, սառչում ե, վորքան ավելի պայծառ ե գիշերը, այնքան ավելի արագ և սառչում զետինը, և նրա հետ միասին, իհարկե, նաև ողը: Այլ պատկեր ե ստացվում, յերբ տվյալ տեղի վրա ամպեր կան: Ամպերը

ճառագայթների համար քիչ են թափանցիկ, այդ պատճառով դեմինը, ամպամած որեւը թույլ ե տաքանում: Բայց, մյուս կողմեց, ամպերը ծածկելով զետինը, պահում են յերկրի արձակած ճառագայթները, զորի հետևանքով զետինն ավելի քիչ ե սառչում, քան' յերբ դիշերը պարզ ե լինում:

#### ԽՆՉՊԵՍ Ե ԱՌԱՋԱՆՈՒՄ ՔԱՄԻՒՆ

Արևի ճառագայթներն ընկնելով յերկրի մակերևույթի վրա տաքացնում են նրան: Յերկրի մակերևույթի տարբեր մասերն արեգակի ճառագայթների պղեցության տակ տարբեր չափով են տաքանում: Դուք ինքներդ դիտեք, զոր ամառը զետափի ավազը տաք ե լինում, իսկ զետի ջուրը՝ վոչ: Բուսականությունից աղատ տեղն ավելի ուժեղ ե տաքանում, քան խիտ բուսականությամբ ծածկված տեղը: Ողի ներքին խավերը, շփվելով զետնի հետ, տաքանում են, և քանի վոր ողը գետնից տարբեր տեղերում տարբեր չափերով ե տաքանում, այդ պատճառով ողում առաջանում են կոնվեկցիոն հոսանքներ: Տաք ողը վերև ե բարձրանում, իսկ նրա տեղ համեմատաբար սառն ողի զանգվածներն են զալիս, վորով քամիներ են առաջանում: Պարբերական քամիների



Նկ. 48. Մովային բրիդ:


Նկ. 49. Յամաքային բրիդ:

հետաքրքիր որինակ են հանդիսանում «ըրիզները» (սիքերը):

Ծովամերձ վայրերում, ցերեկվա ընթացքում ողը ցամաքի վրա ավելի շատ և տաքանում, քան ծովի վրա, և այդ պատճառով ողը ցամաքի վրա բարձրանում ե զետի վեր: Նրա փոխարեն ծովից հոսում է համեմատաբար սառն ողը: Յերեկ ժամանակ ծովից փչող այդ քամին կոչվում ե ծովային բրիդ (սիք: Նկ. 48): Հենց վոր արևը մայր ե մտնում, ցամաքն արագ կերպով սառչում ե, շատ ավելի արագ, քան ծովը: Այդ պատճառով ողը ցամաքի վրա ավելի սառն ե դառնում, քան ծովի վրա, և

գիշերն սկսում է ողի հոսանքը, յամաքից դեպի ծովը — յամաքալին բրեզը (նկ. 49):

Արևադարձալին շրջաններն արելց սառափիկ տաքանում են: Վորքան մոտենում ենք թերութերին, այնքան քիչ են տաքանում յերկրի արդ մասերը: Այդ պատճառով արևադարձալին շրջանների տաք ողը բարձրանում է դեպի վեր (նկ. 50), իսկ նրա տեղը դարձն են ողի զանդագիտությունը և հարավից և հարավից: Այս քամիները, վորոնք յերկրագնդի



Նկ. 50. Պատճառների ծագումը:

պտաման հետևանքով հյուսիսային կիսագնդում՝ հյուսիսարևելքից, իսկ հարավային կիսագնդում՝ հարավարելքից են փչում, կոչվում են պասսատներ:

Փորձեցեք սիստեմատիկ կերպով գիտել քամու ուղղությունը: Այդ նպատակով բաց տեղում, վորքան կարելի յե բարձր, մի թեթև ժապավեն ամրացրեք, իսկ ներքեւում, նրա տակը, չորս ձողեր, վորոնք պետք ե ցուց տան աշխարհի չորս կողմերը՝ հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք: Հյուսիսից փչող քամին կոչվում է հյուսիսային, հարավից փչողը՝ հարավային և այլն: Ամեն որ նշելով քամու ուղղությունը, յեղակացություն հանեք, թե ավալ վայրում այս կամ այն ժամանակի համար վնար քամին է գերակուղ հանդիսանում:

### Խ Ե Վ Ի Ր Ե Խ Ե Վ Ի Ա Ր Գ Ե Ր

1. Յերեմին, յերբ ինքնայենը փայտի կտորներով են յիստացնում, վերեսում ջուրը համարիա յիստում է, իսկ ներքեւում ջուրը դեռ սառն է: Բացարեցեք այդ յերեսութը:

2. Աշնանը, յերբ ցրտերն ընկնում են, սառչում են առև լցերի ջուրը: Ի՞նչ և տեղի ունենում ջրի վերին սառած շերտերի հետ:

3. Վորտեղ և ողն ավելի տաքացած՝ հատակի մժատ, թե առաստաղի:

4. Յերեսսրբիչը կախել են տաք պլիտայի վրա, վորոնեսպի չորանա: Նա ինչո՞ւ յե ձուգում:

5. Ինքնայենի ներքեւում ինչո՞ւ համար են վանդակ շինում, վորը պետք ե մաքրել ինքնայենը դցելուց առաջ:

6. Ինչո՞ւ համար հրդեհաշեները հրդեհ հանգնելիս փայլուն սաղավարտներ են ծածկում:

7. Ինչո՞ւ համար ամառ ժամանակ բաց գույնի հագուստ են հագնում:

8. Վոր թերամանն ե ավելի շուտ հովանում՝ վալլունը, թե՝ մրուր:

9. Ինչո՞ւ բլուրների հարավային լանջերում բուսականությունն

ավելի հարուստ ե:

10. Ինչո՞ւ քաղաքների կեղաստ ձյունն ավելի շուտ է հարվում, քան դաշտերի մաքուր ձյունը:

11. Վոր առօվնուն ե ավելի տաք լինում՝ պմրզ, թե մշուշապատ:

12. Ապակին թափանցիկ և տեսանելի ճառագայթների համար և անթափանցիկ անտեսանելի ճառագայթների համար: Բացարեցեք ապակյա շրջանակների գերը ջերմոցների համար:

13. Ինչո՞ւ ջերմոցներում բարեխառնությունը շատ ավելի բարձր և դրսի բարեխառնությունից:

14. Բացարեցեք, թե ջեսուցման ուղիստորներից ջերմությունն ինչպես և հազորդում սենյակի ողին:

15. Ինչո՞ւ ուղիստորները գոլորկ և փայլուն չեն շինում:

16. Վորն ե ավելի լավ տաքանում արելից՝ սենհաղը, թե ապակա հողը: Ինչո՞ւ:

17. Արդյո՞ք միայն գեղեցկացնելու համար են նիկելով ծածկում թեյամանն ու ինքնայենը:

18. Ինչո՞ւ նավթի սեղերվուարները բաց գույն են ներկում:


### Թ Ե Ր Մ Ո Ս

Թերմոս կոչվում է հատուկ կաղմության ունեցող մի անոթ, վորի մեջ լցված հեղուկը շատ յերկար ժամանակ պահում է իր բարեխառնությունը: Յեթե թերմոսի մեջ լցնենք տաք ջուր կամ թեթև, նա տաք կմիա միքանի ժամ: ճիշտ նույն ձեռվ շատ յերկար ժամանակ սառն է մնում թերմոսի մեջ լցված սառը ջուրը: Ինչպես 51-րդ նկարում յերեսում է, թերմոսը կազմված է յերկասկ պատեր ունեցող մի ապակի շատ շատ: Ապակու ներքին մակերեսույթն արծաթաղութվոծ է, և շատ պատերի միջև լեզած տարածությունից սղը հանված, վորից հետո ապակին զոդված է: Արծաթաղոծ պատերն, անդրադարձնելով ծառագայթները, թույլ չեն տալիս, վոր շատ յեղուկը փոխի իր բարեխառնությունը: Պատերի միջև գտնվող անող տարածությունը կատարելապես զուրկ է ջերմահաղորդությունից: Ապակին մասսվելուց պահանելու համար շիշը զետեղված է սովորաթղթից կամ ֆիբրից

ապտրաստված պատյանի մեջ: Շիշն ինքը փակվում է սովորական խցանով, և խցանի վրայից պտուտակվում հատուկ կափարիչով, վորը պահանջված դեպքում կարելի յէ վորպես բաժակ ծառայեցնել: Շատ խնայողական են տնային թերմոսները՝ կերակուրները տաք պահելու համար: Այդ թերմոսները կարելի յէ պատրաստել ֆաների արկղերից: ABCD արկղի մեջ դրվում ե ծախլով բավական փոքր մի ուրիշ ֆաների արկղ՝ ածօ (նկ. 52), այնպէս վոր արկղերի հատակների և պա-



Նկ. 51. Թերմոս:



Նկ. 52. Տնային թերմոս կիսայեփ կերակուրները յեփելու և տաք պահելու համար:

տերի միջն բավական ազատ տարածություն ե մնում: Այդ ազատ տարածության մեջ փայտի սղոցուք, տաշիդ և կամ լրագրի տրորված թուղթ են լցնում: Փոքրիկ արկղը վերևից ծածկում են կափարիչով, վորի վրայից ամբողջ թերմոսը ծածկում են կափարիչով փայտի տաշեղներով կամ թղթով լցված բարձով: Ճաշից հետո փոքր արկղի մեջ դրված տաք սուպը մինչև ընթրիքը տաք ե մնում: Սնմիչացեա կրակի վրայից վերցված և թերմոսի մեջ դրված կիսայեփ կերպի տամանակ անցնելուց հետո բոլորովի յեփում է:

### ԻՉՈԹԵՐՄԻԿ ՎԱԳՈՆՆԵՐ

Հուտ վճացող մթերքները, ինչպես՝ պտուղները, բանջարեղինները, թարթ միսն ու ձուկը, կաթը և կաթնամթերքները տեղափոխելու համար ոգտվում են հատուկ վագոններից, վորոնց ներսում տեղափոխության ժամանակ, պահպանվում ե մինուքն, ամեն մի մթերքի համար վորոշ բարեխոռնություն\*): Վորպեսզի վագոնի ներսում, դրսի ողի

\* ) Իդոքերմէկ թարքմանաբար աշանակամ և հոգածար բարեխառնությամբ:

բարեխառնությունից անկախ, միշտ միհենուցն ըարեթառնությունը պահպանվի, վագոնի մարմինը մի մեծ թերմոսի ձեռվ և շինվում, կըրկնակի պատերով, հատակով և առաստաղով: Վագոնի մարմին ներքին և արտաքին հանդիրձանքների (տախտակածքների) միջև գտնվում ե թեթև, բայց վստահելի մեկուսանք, վոր բաղկացած և ստվարաթղթի միքանի շերտից, թաղիքից և խցանից: Այդ մեկուսանքի միջից վոչ ող կարող է թափանցել վոչ ել ջուր: Նա պահպանում ե վագոնի ներսում լիղած բարեխառնությունը: Բանի վոր վերևում հրշված բոլոր մթերքների համար ալդ բարեխառնությունը պետք ե բավական ցած լինի, վագոնի առջեի և հետևի մասերում հատուկ զետեղոցներ կան սպառվցի և ցրտացուցիչ խառնուրդների համար: Այդ զետեղոցներից յուրաքանչյուրի վերևում շինված են բացվածքներ վագոնի մեջ սպառուց բարձելու համար: Սառուցը բարձելուց հետո այդ բացվածքները կրկնակի խուփերով ամուր փակվում են: Մթերքները վագոնի մեջ բեռնելու համար նրա մեջտեղում յերկու կողմից կիպ փակվող գոներ են շինված: Վագոնի պատերը ներքուստ և արտաքուստ ներկված են սպիտակագույնությամբ:

### Սուրգի հարցեր Ագլի վերաբերյալ


1. Ի՞նչ ե կոչվում ջերմահաղորդություն:
2. Փորձով ի՞նչպիս կարելի յէ ապացուցել, վոր տարրեր մնանակը որ տարբեր ջերմահաղորդություն ունեն:
3. Ո՞վ լավ ե հաղորդում ջերմությունը:
4. Ի՞նչ ե կոչվում կոնվեկցիա:
5. Փորձով ի՞նչպիս կարելի յէ ապացուցել, վոր հեղուկները կոնվեկցիայի ոգնությամբ են տաքանում:
6. Ի՞նչո՞ւ շենքի առաստաղը վերևից ծածկում են հողի հաստ շերտով:
7. Գծեցեք գետնատան գծագիրը:
8. Գետնատունն ի՞նչո՞վ ե տաքացվում:
9. Ի՞նչպիս ե, վոր գետնատան թղթե պտտուհանները պաշտպանում են գետնատունը ցրտից:
10. Ի՞նչո՞ւ գետնատան մեջ կրկնակի դոնիր են շինում:

11. Ի՞նչպես են շինում մասանները բանջարեղեններ պահելու համար:
12. Ի՞նչպես են շինում սասացարանը:
13. Գետնատան պատերն ինչու յեն հողով ծածկում (քանի պատն են հողով ծածկում):
14. Չուրը վոր բարեխառնության ժամանակ ունի ամենափոքր ծավալը:
15. Զրի ընդարձակման հատկությունը բնության մեջ ի՞նչ դեր է խաղում:
16. Ի՞նչ փորձով կարելի է ապացուցել, վոր ջուրն ամենափոքր ծավալն ունի 4° C բարեխառնության մեջ:
17. Ի՞նչպիսի ջեռուցումն է կոչվում շոգեջրային:
18. Նկարագրեցեք ջերմության փոխանցման (տարածման) յերեք յեղանակները:
19. Վոր մարմիններն են ջերմությունը լավ հաղորդում և վորոնք վատա:
20. Ջերմանազորդության տեսակետից վոր մարմինների թվին են պատկանում շինանյութերը:
21. Ի՞նչ բան է ջեռուցման շրջանային սիստեմը:
22. Խորհրդակին Միության մեջ վորտեղ գոյություն ունի շրջանային ջեռուցում:
23. Շրջանալին ջեռուցումն ի՞նչ ոգտավետություն ունի:
24. Ի՞նչ փորձով կարելի է ցույց տալ, վոր ջուրը ջերմության վատ հաղորդիչ է:
25. Որինակները բերեք, վորոնցից կարելի լինի տեսնել, վոր դագերը ջերմության լավ մեկուսիչներ են:
26. Կարելի յե արդյոք վառելիք խնայել կերակուրներ պատրաստելիս թերմոս զործածելով:
27. Ի՞նչ բան է իդոթերմիկ վարումը:
28. Նկարեցեք, թե ջերմությունն ի՞նչպես է տարածվում կոնվեկտիվով:
29. Տվեք ջրային ջեռուցման ուրվագծային գծագիրը:
30. Կարելի յե արդյոք կենտրոնական ջեռուցումով ոգտվելիս կանոնագորել ձեր զբաղեցրած սենյակի բարեխառնությունը, Այդ ի՞նչ ո՞քս է արվում:
31. Ի՞նչ բանի համար են վորոշ տներում հատակի վրա պղնձե վաճակով ծածկված անցքեր լինում:
32. Ի՞նչու ջրային ջեռուցման սաղիտորը պետք է փայլ չունենա և սպիտակ չլինի:
33. Ի՞նչպես է առաջանում քամին:
34. Վոր քամին է կոչվում ծովային սիք:

35. Որվա վոր պահին և փշում ծովային սիքը:
36. Բամբն միենմայն ուզգությունն ունի մթնոլորտի ստորին և վերին շերտերում:
37. Ի՞նչպես կարելի յե խմանալ, թե քամին ի՞նչ ուզգություն ունի մթնոլորտի վերին շերտերում:
38. Ի՞նչու անհրաժեշտ է ողափոխել սենյակը:
39. Ողն ինչից է ապականվում բնակելի աներում:
40. Ողափոխությունն ի՞նչպես պետք է կատարել:
41. Ի՞նչու հոլլանդական վառարանում ալիքան շատ անցքեր են շինում:
42. Ի՞նչու վառարանների համար շինում են վոչ թե մեկ, այլ չեր կու դռնակ:
43. Տվեք հոլլանդական վառարանի (պարզեցրած) գծագիրը:
44. Գծեցեք ոռոսական վառարանի կորիածքը:
45. Թթվածինն ինչպես է համում փայտերին:
46. Ի՞նչպիսի ջեռուցումն է կոչվում կենտրոնական:
47. Կենտրոնական ջեռուցումն ի՞նչ առավելություններ ունի տեղական ջեռուցման հետ համեմատած:
48. Ի՞նչու ջրային ջեռուցման ժամանակ ջեռուցման ցանցի մեջ մտցնում են լոնդարձակման ջրամբարը:
49. Վորտեղ է զրվում լոնդարձակման ջրամբարը:
50. Շենքի մեջ վորտեղ է զտնվում կենտրոնական ջեռուցման կաթսան:
51. Դուք ի՞նչպիսի կենտրոնական ջեռուցման սիստեմներ գիտեք:
52. Վառարանի մեջ քարշն ինչից է առաջանում:
53. Ի՞նչպես պետք է քարշ ստեղծել վառարանի մեջ, յեթե այնտեղ քարշ չկա:
54. Վառելանյութի տվյալն համար անհրաժեշտ թթվածինը վորտեղ կից է ստացվում:
55. Զի կարող արդյոք ողափառել, վոր վառարանը վառելիս աննշան կում զտնված ամերող թթվածինը սպառվի փայտերի ալիքան համար, և զժվար լինի շնչել սենյակում:
56. Ի՞նչից է առաջանում շմուրը:
57. Թթվածինն ի՞նչպես է հասնում կերասինի լամպի բոցին:
58. Ի՞նչ նշանակություն ունի լամպի ապակին:
59. Ի՞նչու անհրաժեշտ է վառարանների խողովակները մաքրել:
60. «Մոլնիա» լամպի սեղմուտրի մեջ յեղած դլանաձե բացվածքն ի՞նչ նշանակություն ունի:
61. Ի՞նչպես պետք է հանգցնել թափված այրվող կերասինը:
62. Ի՞նչպես պետք է վառել վառարանը:

ԿԵՐՊԻՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏՅՈՒԱՆՆԵՐԸ

1. Պատասխանը դանվում է 8-րդ եջում:
2. Պատասխանը դահք 4-րդ նկարի վրա:
3. Վոչ:
4.  $25^{\circ}\text{C}$ :
5. Վերջին որինակը —  $50^{\circ}\text{C}$ :
6.  $16^{\circ}\text{R}$ ,  $4^{\circ}\text{R}$ ,  $16^{\circ}\text{R}$ ,  $40^{\circ}\text{R}$ ,  $1,6^{\circ}\text{R}$ :
7.  $12,5^{\circ}\text{C}$ :
8. Պատասխանը փնտեցեք 9-րդ եջում:
- 9.
- 10.
11.  $\left\{ \begin{array}{l} \text{Տեսեք 4-րդ նկարը:} \\ \text{Տեսեք 4-րդ նկարը:} \end{array} \right.$
- 12.
- 13.
14.  $2,90^{\circ}\text{R}$ :
17.  $125^{\circ}\text{C}$ :



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ԳԼՈՒԽ.

ՄԿՁԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՐՄԱՅԵՐԻ ՅԵՐԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՅԵՎ ՆՐՈՎՆՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԻՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՌԱՍԻՆ

Ներածություն	3
Մարմինների ջերմագին վիճակը վորոշելու լեզանակները	5
Հաբորատոր աշխատանքների վերաբերյալ կանոններ	7
Հաբորատոր աշխատանք № 1	7
Զերմաշափ	8
Հաբորատոր աշխատանք № 2	9
Խնդիրներ և հարցեր	11
Հաբորատոր աշխատանք № 3	12
Խնձակես պետք և ոգտվել ջերմաշափից	13
Բարեխառնությունների գրաֆիկը	14
Խնդիրներ և հարցեր	16
Բժշկական ջերմաշափ	18
Հաբորատոր աշխատանք № 4	19
Հաբորատոր աշխատանք № 5	20
Մարմինների ընդարձակվելու տաքանակուց	21
Խոնչ բան և տեխնիկան	23
Գինդ մարմինների ընդարձակման հաշվառումը տեխնիկալում	25
Թերմոսկոպ	27
Հարցեր և խնդիրներ	28
Ստուգիչ հարցեր և զւորի վերաբերյալ	29

II ԳԼՈՒԽ.

ԲՆԱԿԵԼԻ ՅԵՎ ԱՐՑՈՂՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՐ ՄՆԱՅՈՒ  
ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Զերմությունն ինչպիս և տարածվում դանապան մարմինների մեջ	31
Հաբորատոր աշխատանք № 6	32
Շինարարական նյութերի ջերմահաղորդությունը	35
Հարցեր	35
Կոնվեկցիա	36
Զրի ընդարձակման առանձնահատկությունները	38

Եենքերի տաքության պահպանումը . . . . .	39
Գետնափոր աներ . . . . .	42
Զեռուցում . . . . .	43
Ի՞նչպես պետք է վառել վառարանը . . . . .	46
Ռուսական վառարան . . . . .	47
Կենտրոնական ջեռուցում . . . . .	50
Լաբորատոր աշխատանք № 7 . . . . .	52
Շոգեջեռուցում . . . . .	53
Գործարանի կաթսայարանի ուրվագիծը . . . . .	55
Զեռուցման շրջանային սիստեմ . . . . .	56
Եենքի լուսավորությունը . . . . .	59
Ճառագալթում . . . . .	60
Լաբորատոր աշխատանք № 8 . . . . .	62
Ճառագալթների կլանում և ճառագալթում . . . . .	63
Ի՞նչ և տեղի ունենում ջերմոցում . . . . .	63
Ջերմացին յերկույթները բնության մեջ . . . . .	65
Ի՞նչպես և առաջանում քամին . . . . .	66
Խնդիրներ և հարցեր . . . . .	67
Թերմոս . . . . .	68
Իզոթերմիկ վագոններ . . . . .	69
Ստուգիչ հարցեր II գլխի վերաբերյալ . . . . .	72
Խնդիրների և հարցերի պատասխանները . . . . .	



ԳԻՒՐ 65 ԿՈՊ. (4<sup>1</sup>/<sub>1</sub> մ.)

28 693

11

2/9



Ի. ՖԱԼԵԵՎ

**РАБОЧАЯ КНИГА ПО ФИЗИКЕ**

Госиздат ССР Армении  
Эревань 1982